Անասունների քանակության ընդհանրական կրճատում իրեն գեղադաշիայի նշան վիճակագրութեն զեռ շի կարելի հաստատել: Թեև վերև մեջբերված տվյալներն առանձին յերկիրների համար արդեն տալիս են անասունների քանակության վորոշ կրճատում, բայց դեռ վաղաժամ ե դրանից հեռու դնացող հետեւթյուններ անել, վորովհետև այդ յերեսութը դեռ շատ նոր ե: Համարյա անկարելի յե վորես վիճակագրական տվյալ գտնել անասունների վորակի վատացման վերաբերմամբ. վիճակագրությունը շատ թերոի յե հատկապես գյուղացիական ազգարային ու գաղութային երկիրներում: Բերքատվության անկումը ՀԱՄՆ-ում նկարագրում ե ստորև դրված աղյուսակը:

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՀԱՄՆ-ՈՒՄ

«Crops and Markets» հանդեսը (հոկտեմբեր) հաղորդում ե, թե 1933 թվին բերքատվությունը բոլոր կուտուրաների վերաբերմամբ ակրին $4,80\%-\text{ով}$ ցած կին 1932 թ. բերքատվությունից, $8,50\%-\text{ով}$ ցած՝ 1931 թվի համեմատությամբ և $6,20\%-\text{ով}$ ցած՝ ակրի միջին բերքատվությունից վերջին 10 տարվա ընթացքում: Առանձին կուտուրաների վերաբերմամբ բերքատվության մասին հետեւյալ տվյալները կան ամեն մի ակրից (բուշելներով).

¹ «Polish Institute of Economic Research» (Տնտեսական հետազոտությունների լեհական ինստիտուտ): Ամսական բյուլետենները:

	1933 թ.	1932 թ.	1921—1930 թ. թ. համար
Ցեղակացորեն	22,2	26,7	26,1
Վարսավ	18,9	30,1	29,6
Վուշի սերմ (կտավահատ)	4,2	5,7	7,5
Գարի	15,2	22,7	22,8
Ցորեն	11,5	13,2	14,1
Աշորա	8,5	12,1	12,6
Կարտոֆիլ	95,4	106,1	110,8

Դեղրադացիան ամենից ավելի պարզ կերպով յերեան ե գարիս տեսնիկան կուլտուրաների կրնաման մեջ: Այն գյուղացիները, վորոնք տեխնիկական կուլտուրաների ցած գների ժամանակ ընդհանրապես գոյություն պահպանել չեն կարողանում, կրիին վերադառնում են պարենի արտադրությանը սեփական կարիքների համար, վորպեսզի քաղցից չմեռնեն:

Ահա միքանի որինակներ.

Շաբարի հակնդեղի ցանքի տարածությունը
(իազար հեկտարներով)¹

Իտալիա	Հեհաստան	Զեխո-Սլովակիա	Հարավ-
Միջին 1927—1931 թ. համար	108	202	241
1932 թ.	84	116	146
1933 թ.	85	104	145

¹ Հոռոմի Միջազգային ագրարային ինստիտուտի բյուլետենները, 1933 թ. սեպտեմբեր:

Կանեփի ցանքի սարածությունը (հազար
նեկտարներով)¹

Ետառնիա	Լատգիա	Լիտվա
Միջինը 1927-1931 թ.թ. համար	30	56
1932 թ.	15	32
1933 թ.	16	41

Մոնոկուլտուրայի միքանի յերկիրներում տեղի ունեցավ
արտահանական կուլտուրա ցանքած տարածության սաստիկ
կրծատում:

Բամբակի ցանքի սարածությունը Յեգիպտոսում
(հազար հեկտարներով)

1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.
774	875	717	459	785

Բամբակի ցանքի տարածության նոր ընդարձակումն 1933 թվին ձեռք ե բերվել անգլիական կառավարության հատուկ միջոցառումների ոգնությամբ:

ԳՅՈՒՂԱՑՆԵՍԽԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ
ՎՈԶՆՉԱՑՅՈՒՄԸ

Միջնակառ հարյուրավոր միլիոն գործազուրկներն ու չքաշվորները սովահար են լինում ու ցնցուիների մեջ են, գլուղատնտեսական արդյունքների կազմակերպված վոչնչացումն ավելի ու ավելի մեծ չափեր ե ընդունում: Դժվար թե գյուղատնտեսական վորեն ապրանք գտնվի, վոր վոչնչացվելիս չլինի վորեն իերկուում: Ցորենն ու յեգիպտացորենը ՀԱՄՆ-ում ոգտագործվում է իրեն իրեւ վառելիք, կովերի մորթած միսը Հոլլանդիայում ու Դա-

նիայում ոգտագործվում է իրեւ պարարտացման միջոց: ՀԱՄՆ-ում վեց միլիոն խոզ ե գնվում՝ վոչնչացներու համար: Մեկուկես միլիոն նարինջ լուսդոնում ծովն ե նետված: Տասը միլիոն պարկ սուրճ այրված ե բրազիլիայում և այլն և այլն: Այս բոլորը կապիտալիզմի նեխման աղաղակող ապացույցներ են:

Մեջ ենք բերում վերջին տարվա ընթացքում ապրանքների վոչնչացման ժամանակագրությունը, վոր շատ հեռու յել լրիվ լինելուց:

Հացահատիկը Հացահատիկի (ցորենի) եծանությունը այնտեղի եւ ՀԱՄՆ-ում: հասցնում, վոր ներտասկա նահանգի Կոլֆախս կոմսության դպրոցներում վարուում ե ընդունված հացահատիկը գործադրել իրեւ վառելիք: Կոմսության ավելուրդ հացահատիկն այդ նապատակի համար գնել ե ծաղովդրական կրթության տեղական վարչությունը:

(«Մոնրեալ Գաղետ», 12/IX 1982 թ.)

Հարավային Դակոտի համալսարանի գյուղատնտեսական տեխնիկայի պրոֆեսոր Պատտին հաւելի ե, վոր հացահատիկի ներկա գներն ինկատի ունենալով՝ ավելի շահավետ այն ոգտագործել տեղում ու հիմնարկներում իրեւ վառելիք, բան բրիկետները: Նույն նահանգում դպրոցներն արդեն հացահատիկը գործ են ածում իրեւ վառելիք:

(«Նյու-Յորք Տայմ», 4/VII 1982 թ.)

Զուկը ֆրան-
սիայում:

Դուարենեկ նավահանգստում վորսացած ձուկը ծովքնեցին, վորովինեն զնորդներն իրածարգում ելին վնարել 100 կիլոգրամ ձեան համար նվազագույն 20 ֆրանկ գինը:

(«Յումանիտե», 5/V 1983 թ.)

Կրուադիկի նավահանգստում 50 հազար սարդին ծովքնեցին, վորովինեն զները ուկայում ցած ելին:

(«Դեպեշ», 24/V 1983 թ.)

¹ Հոռմի Միջազգային ապրանքային ինստիտուտի բյուլեններ, 1933 թ. սեպտեմբեր:

Կանուչեղինը Ֆերմեների Հոլլանդիայում 120 վագոն ծաղկական լամբ, սպանաղ, սոխ ու կաղամբ վոչնչացրին, վարվիետի այդ ժամանակուրյան համար զնորդներ չգտնվեցին:

(«Դեյլի Ռորկեր», 2/VI 1933 թ.):

Ֆերմեների զնորդունակուրյունը բարձրացնելու համար կազմված կառավարական ծրագիրը նախատեսնում է ծխախոտը ցանքարածուրյան կրնատում 50% -ով, ըստ դորում այն դեպքերում, յերբ ծխախոտն արդեն ցանված է, յենքադրվում է արգելվ հանդիսանալ նրա հասունացմանը:

(«Զորնալ ով Կոմմերս», 26/VI 1933 թ.):

Արշարժները 225 հազար վոչխար վոչնչացվեց Զիլիում. փոխառակիրկ վոչխարի միս արտահանվելու՝ այդ վոչխարները նետական են նրանցից ոճուղեր, սեհարին և այլն արտադրելու և ուրիշ արդյունաբերական նպատակների համար:

(«Դեյլի Ռորկեր», 28/VI 1933 թ.):

Արշարժների Վորովիետի մորքու և նարայի վաճառումից գոյացած վոչնչացումն ըստ լինամուր չի ծածկում վոչխարների փոխադրման ծախսներին մինչև սպանդանոցները (բուրդն ու միսը բոլորովին գնորդ չեն նարում), ուստի հարյուր հազարավոր պառակ վոչխարներ մորքվեցին լեռնային արտավայրերում, վորպեսզի տեղ բացվի գառների համար:

(«Կիրառաֆասություն», 7/VII 1933 թ.):

Կառավարական ծրագիրը նախատեսնում է 5 միլիոն խոզերի վոչնչացում և վերահսկողուրյուն նոր խոզերի անեցողուրյան վրա: Խոզերի վոչնչացումն սկսված է:

(«Նյու-Յորկ Հերալդ Տրամը», 24/VIII 1933 թ.):

Բամբակը Ամերիկյան կտուժարության գյուղատնտեսական ծրագիրը նախատեսնում է բռնբակի ցանքի տարածության կրնատումն 1934 թվին 40% -ով ու 1935 թվին 25% -ով:

(«Սևմի Ռեկլի Ֆարմ Նյուու», 8/X 1933 թ.),
(«Կերրենտ Հիստորի», 1933 թ. հոկտեմբերի):

Հացահատիկը «Խրանիփնիզնոսի» ենապորտային կազմակերպության բուլղարիան յիշեկցիայի գնած 6 հազար տոնն հացահատիկը փակց պահեստներում:

(«Եխո», 9/XI 1933 թ.):

Գայլուկի վանառահանման հարցով գբաղված կուտական հանձնաժողովի նիստում կենտր ֆերմեր Սյուարտ Մեյն հայտարարեց, թե 1925—1929 թ. քննացեամ Անգլիայում գայլուկի գինը բարձրացնելու նպատակով վոչնչացված է մոտ 1 միլիոն ցենտներ — 2 միլիոն ֆունտ ստերլինգի արժողությամբ:

(«Մորնինգ Պոստ», 13/IX 1933 թ.):

Բամբակը 40 միլիոն ակր հողից, վարտեղ բամբակ եր ցանված 1933 թվին, գյուղատնտեսության մինչխռության սկզբներում՝ վոչնչացված է 10 միլիոն 403 հազար ակր ցանք:

(«Պրավլա», 14/IX 1933 թ., մատնանշում «Զարլզ Պեկառի թղթակցության վրա Նյու-Յորկի «Ժայմսից»):

Սուլքօթքա- Առ 1 սեպտեմբերի 1933 թ. Բրազիլիայում վոչնչաց- պիթիայում: ված է մոտ 22 միլիոն պարկ սուրճ, ըստ վարում յենքադրված և լացուցիչ կերպով վոչնչացնել ևս 20 միլիոն պարկ — 1934 թ. ունկորդային 30 միլիոն պարկ բերվից:

(«Դոյչ Արեմայն Յայտունգ», 27/IX 1933 թ.):

Մարգարիտը Խոչոր առևտական Միկրոնուն հրապառնիւթիւնի ակունք այրեց 720 հազար սուրին վորակի մարգարտ-

հատիկ 50 հազար յին արժողությամբ, մարզարտի գները բարձրացնելու նպատակով:

(«Տայմս», 12/X 1933 թ.):

Նարինչն 1933 թ. ոգոստոսին Անգլիայում պետք է ծովը նետեալիայում: յին մոտ $1\frac{1}{2}$ միլիոն սպանական նարինջ:

(«ԵԼ Սոլ», 1/VIII 1933 թ.),
(«Մունդո Ռեպերո», 3/VIII 1933 թ.):

Դայլուկը շեն Գայլուկի առևտի սինդիկատը Զայցի օրջանում՝ խո-Սլովակիայում սկսել է 70 հազար ցենսներ գայլուկի փոշնչացումը:

(«Սոցիալ-դեմոկրատ», 12/IX 1933 թ.):

Խասունները Առ. 1 հոկտեմբերի 1933 թ. Դանիայում փոշնչացված դանիայում: ե, գյուղատնտեսության դանիական մինիստրության տվյալներով, 117 հազար գլուխ անասուն: Անասունների փոշնչացումը կատարվում է կառավարության ուղղակի ոժանդակությամբ:

Խողերը Հուկա բերված մանր խողերի ամբողջ քանակության մոտ կեսը (45 հազար գլուխ) կառավարության կողմից գնվեց և Միսսիսիպի գետում խեղդել տրվեց վաճառահանման դժվարությունների կապակցությամբ:

(«Նյու-Յորք Հերալդ Տրեբյուն», 15/IX 1933 թ.):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՄՈՏ ՅԵՎ ՄԵԶ ՄՈՏ

Հետևյալ տվյալները նկարագրում են զյուղատնտեսության անկումը կապիտալիստական յերկիրներում:

Արհեստական պարարտացումների արտադրության անկումը կապիտալիստական աշխարհում:

Տարիներ	Մելիսարան (հազար տոնն-ներով)	Բնակչություն գյուղական գյուղական	Թուման- յան գյուղական	Սուսեր- ֆունդատ	Կալիում
1929	4 062	10 520	6 020	15 300	2 400
1931	2 242	7 900	4 000	10 600	1 350 ²

1932 թվին արտադրությունն ել ավելի ցած ընկավէ: Հանրագումարային տվյալները գեռ հրապարակված չեն: Արտադրության մի նշանակալից մասը մնում է պահանջաներում չվաճառված: Կոպիտ գնահատությամբ՝ արհեստական պարարտացումների սպառումը ներկա մումենաւմ կրկնակի բնկել է նգմաժամից առաջ յեղած օրջանի համեմատությամբ:

Դրան հանդիպագրում ե արհեստական պարարտացումների մեր արտադրության արագ զարգացումը վերջին տարիների ընթացքում:

Կապիտալիստական աշխարհում յեղած անկմանը, վար մինչև այժմ ել շարունակվում է, մեզ մոտ հանդիպադրվում է 50-ից մինչև 100% աճում:

Ինտենսիվ տեխնիկական կուլտուրաները կապիտալիստական աշխարհում յեզ Խորհրդային միության մեջ

Յանքային տարածությունը միլիոն հեկտարներով

Կապիտալիստական յերկիրներ ³	Խորհրդային միություն		1929 թ.	1932 թ.
	1929/30 թ.	1931/32 թ.		
Շաքարի ճականդեղ	2,22	1,95	0,77	1,63
Ծիալիստ	2,48	2,38	0,05	0,10
Կանեփ	0,48	0,34	0,87	0,94
Բամբակ	34,61	31,37	1,06	2,17
Զուլու	1,39	0,76	—	—

¹ Ազգերի լիգայի վեճակազմական տարեգիրք, 1932/33 թ., էջ 134—143 (Զիւլի, Գրեմանիա, Կոնգո):

² 1932 թ.:

³ Հոսոմի Ազգարային ինստիտուտի տարեգիրք և Ազգերի լիգայի տարեգիրք:

⁴ Պետության տվյալներով:

ՄԵՐԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Գյուղատնտեսական մեքենաների ոգտագործումը կապիտալիստական աշխարհում ճգնաժամի ընթացքում կրծառվում է, վորովհետև նույնիսկ ունեսոր գյուղացիությունը շատ հաճախ միջոցներ չունի, վոր մաշված մեքենաները նորերով փոխարինի հաճախ արակարուները փոխարինվում են ձիերով, վորովհետև կերն եժան և ու առնող չի գտնում, իսկ թանգարժեք բենզին դնելու համար փող չկա:

Այդ շարժումն արտահայտվում է գյուղատնտեսական մեքենաների գործածության սաստիկ անկումով, վորի մասին արդեն խոսք յեղափ վերելում: Վորովհետև մենք հաճաշխարհային ինդեքս չունենք, ուստի վերցնում ենք ՀԱՄՆ-ում դնված գյուղատնտեսական մեքենաների արժեքը, հաշվի առնելով այն, վոր ՀԱՄՆ-ը այդ ասպարեզում հանդիսանում են աշխարհի ամենախոշոր ապառզու:

Ամերիկացիները ծախսել են գյուղատնտեսական մեքենաների վրա (առանց ավտոմոբիլների)¹ միլիոն դոլարներով.

1929 թ.

1930 թ.

1931 թ.

1932 թ.

578

480

277

110

Ծախքերը 20% ից եւ ավելի ցած են ընկեր: Պարզ է, վոր այս չի ծածկում նույնիսկ ընթացիկ մաշվածը:

Դրա հանգեց կանգնած է գյուղատնտեսական մեքենաների մեր արտադրության արագ աճումը:

ՆՐԱՆՑ ՄՈՏ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԵՆ ՊԱԿԱՍԵՑՄԱՆ, ՄԵՋ ՄՈՏ
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ

Կապիտալիստական յերկիրների մեծամասնության ազրաբային քաղաքականության առանցքը ներկա մոմենտում հանդիսանում է արտադրության կրնառումը: ՀԱՄՆ-ում պրեմիա յե արվում ամեն մի չցանված հետարի համար: Միջադարյին համաձայնու-

¹ Գյուղատնտեսության արեգիրք 1933 թ., էջ 703: Այս թվերն ավելի յեն, քան առաջ մեջ բերվածները, վորովհետև նրանք վերցված են վիճական մասնավոր աղբյուրից:

թյունները (լոնդոնի համաձայնությունը ցորենի մասին) արտադրության հարկադրական կրծատում են նախատեսնում: Անբերիությունը հաջողություն է համարվում: Դեռ յերկու տարի առաջ ամերիկյան գավառական մի թերթ («Տրիբյուն», Մինեապոլիս) գրում եր:

«Մենք, վոր սովորել ենք աղոթել մեր ամենորյա հացի համար, այժմ աղոթում ենք, վոր այն վերցնեն մեղնից: թեքումը միակերպ տարրորինակ ե ինչպես աստվածաբանության ասպարեզում, այնպես նաև եկոնոմիկայի բնագավառում»:

Այդպիսի հակասություն կա գյուղատնտեսական կրթության սիստեմի ամբողջ դրվագի միջև, վորն ուղղված է գեպի այն, վոր սովորեցնի, թե ինչպես պետք ե ամենից ավելի մեծ բերք ստանալ, զյուղական տնտեսվարի պետական պարզեցման ավանդական սիստեմի միջև բարձրագույն բերքի համար և ագիտացիայի ու որենսդրության միջև ցանքային տարածությունը կրծատելու համար, արհեստական պարարտացումների ուժեղացրած գործածությունն արգելելու համար (բամբակի կուլտուրայի ամերիկյան շրջանները):

Այս անիմաստ խառնափնթորության հանգեց կանգնած է բերքատվությունը հետջնետե բարձրացնելու մեր ուղղագիծ քաղականությունը:

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՃԳՆԱԺԱՄԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Յերկիրների մեծամասնության մեջ արդյունաբերական արտադրանքը անկման ամենացած կետին հասավ 1932 թ. հուլիս—սգոստոսին:

Հարց և ծագում. արդյունաբերական նզմաժամը վերջնականացնելու և ամենամեծ խորության մոմենտը: Արդյունականացնելու մեջ արդի դժբախտայի փուլում: Ի՞նչպես պետք եղանակում միքանի յերկիրներում անկասկած տեղի ունեցող դրության բաշելավումը:

Այս հարցի պատասխանը, թերևս, այժմյան դրության ամենապիտակը պրոբլեմն է ներկայացնում: Այդ նպատակի համար մենք ամենից առաջ կտանք արդյունաբերական նգնաժամի կարևորագույն տվյալների դինամիկական անալիզը:

Արդյունաբերական ապրանքների համաշխարհային արտադրանքը (առանց ԽՍՀՄ-ի) յեռամսյակներով
(1928 թ. = 100)

Գերմանական կոնյունկտուրային ինստիտուտի
հաշվարկում¹

1932 թ.

1933 թ.

I	II	III	IV	I	II	III
69,4	64,2	63,3	67,4	66,5	75,8	82,7

IV յեռամսյակի համար հաշվարկում դեռ չկա. ՀԱՄՆ-ում տեսնալին ամիսներին սատիկ անկում տեղի ունեցավ, բայց չնա-

¹ «Վոլխենբերիիտ» («Շաբաթական տեղեկագիր»), 1933 թ. XI-ի 23-ին:

յած դրան՝ համաշխարհային արտադրանքն 1933 թ. վերջին անկասկած ավելի բարձր է, քան 1932 թ. վերջին:

Այդ նույն աղյուսուրը արդյունաբերական արտադրանքը և ցույց տալիս կարեռագույն յերկիրներում, սկսած ամենացածը՝ կետից 1932 թվի կեսին մինչև 1933 թ. աշունը (տոկոսներով)².

Անգլիա համար ֆրանսիա Գերմանիա Լեհաստան Կանադա Ճապոնիա ՀԱՄՆ
9,9 13,5 21,7 22,4 22,6 35,6 47,4 53,3

Հետեւալ աղյուսակը ցույց է տալիս ամենագլուխավոր կապետական յերկիրների արտադրության ինդեքսների աճումը Ազգերի լիգայի տվյալների հիման վրա³.

Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը
(1928 թ. = 100)

Տարիներ	ՀԱՄՆ	Անգլիա	Գերմանիա	Ֆրանսիա	Ճապոնիա	Լեհաստան
1929 . .	107,2	106,0	100,4	109,4	11,4	99,7
1930 . .	86,5	97,9	90,1	110,2	105,6	81,8
1931 . .	73,0	88,8	73,6	97,6	100,7	69,3
1932 I յեռ.	62,5	90,1	62,0	79,5	101,0	52,2
II »	54,7	89,4	61,3	74,0	104,8	54,5
III »	55,0	82,8	59,6	73,2	107,2	54,0
IV »	59,5	90,0	61,8	76,1	118,7	54,0
1933 I »	56,5	89,9	63,9	80,8	120,7	48,2
II »	70,9	90,9	68,5	85,8	126,0	55,2
III »	82,6	91,7	70,8	87,4	128,6 ³	58,0
Ամենացածը կետը 1932 թ. .	52,3	III յեռ.	82,8	58,5	72,4	Մայիս ⁴ 91,4
Ամենաբարձր կետը 1933 թ. .	90,1	91,7	72,0	88,2	130,4	Մայիս 59,4
Ունեցած վերջին նոյեմբեր	III յեռ.	նոյեմբեր	նոյեմբեր	նոյեմբեր	Ունեցած նոյեմբեր	130,6
տվյալները . .	69,4	91,7	71,2	85,0	130,6	59,4

¹ Գերմանական կոնյունկտուր-ինստիտուտի յեռամսյա տեղեկագիրը, հրատարակության 8-րդ տարի, հատոր II, մայն Ա, եջ 97:

² Ամսական վեճակարգական բյուլետեն, զանազան համարներ. ամսական տվյալները վերահաշվարկված են ըստ յեռամսյակների:

³ 1933 թ. հունիս—հուլիսի տվյալները:

⁴ Ճապոնիայում ցածրագույն կետը 1931 թ. մայիսին:

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր Անգլիայում, Ճապոնիայում ու Լեհաստանում վերջին հաշվարկված տվյալները բարձրագույններն են հանդիսանում տարվա ընթացքում. վոր Գերմանիայում ու Ֆրանսիայում տեղի յե ունեցել շատ անհան կը ըստ աղյուսակը. վոր ՀԱՄ-ում, ընդհակառակը, խիս սասիլ անկում ե տեղի ունեցել:

Արդյունաբերական արտադրանքի ավելացման պատճառները մենք տեսնում ենք հետեւյալում.

1. «Բ» բաժնի պատրասի արդյունաբերական ապրանքների պատճերի ավելցուկները մանրաքանչակ և մեծաքանչակ առևտի մեջ և ձեռնարկաւունեներում կլանված են նգնածամի կողմից և ընկել են մինչև անգամ շնորհալից ել ցած: (Այս մասին տվյալներ կան միմիայն ՀԱՄ-ի համար—տես վերևում,—բայց լրագրական տեղեկությունները հաստատում են այդ բանը նաև մյուս յերկինքների վերաբերմամբ): Այդ բանը տեղի յե ունենում ամեն մի արդյունաբերական ճգնաժամի ժամանակ: Գների անընդհատ սաստիկ անկումը ներկա ճգնաժամի ընթացքում բոլոր մեծաքանակ ու փոքրաքանակ առևտրականներին դրդեց իրենց պաշարները պակասեցնելու մինչև նվազագույնը: Ունեող սպառողներն ես ըստ կարելույն հետաձգում եյին վոչ ամենորյա գործածության ապրանքների գնումը (կոչիկներ, զգեստ, կահ-կարասի, ավտոմոբիլներ)՝ սպասելով, վոր գներն ել ավելի ընկնեն: Այն մոմենտին, յերբ գների անկումը կանգ առավ և յերևան յեկավ գների բարձրացման հետանկարը, մի կողմից՝ ազդեցություն գործեց այն իրադրությունը, վոր մասնավոր պահանջարկը մինչև հիմա կասեցվում եր, մյուս կողմից՝ առևտրականներն ու գործարանատերերը շտապեցին լրացնել իրենց պաշարները (առանձնապես այն յերկիրում, վորտեղ ուժեղանում եր ինֆլյացիան):

2. Արտադրության միջոցների արտադրությունը 1931 ու 1932 թ. թ. շատ յերկիրներում, ակներեռքն, ավելի պակաս եր, քան թ. թ. շատ յերկիրներում (տես I գլուխ): Այստեղ ևս ճգնաժամի ընթացնը մաշումը (տես I գլուխ): Այստեղ ևս ճգնաժամի ընթացքում պակասներ եյին առաջացել, վորոնք պետք եր լրացնել Այստեղից՝ յերկաթի ու պողպատի վաճառահանման ավելացումը և, թեև շատ աննետ բանակությամբ, մեքենաների արտադրության ավելացումը:

Մեքենաշինության ինդեքսը (1928 թ. = 100)¹

Տարիներ	Ցեռամսակներ	Գերմանիա	Անգլիա	Ֆրանսիա
1932 թ.	III	39,3	75,1	67,8
	IV	38,2	78,0	68,3
1933 թ.	I	33,5	82,2	73,0
	II	43,7	82,9	80,2
	III	47,5	83,3	82,2

3. Արդյունաբերական հումքի արտադրությունն այնքան սաստիկ սահմանափակված եր ճգնաժամի ընթացքում, վոր պաշարների աճումը վերջին ժամանակներն ընդհանուր առմամբ կանգ առավ, իսկ միքանի ճյուղերում վերջին տարվա ընթացքում նույնիսկ պաշարների վորոշ նվազում տեղի ունեցավ:

Արդյունաբերական հումքի համաշխարհային պաշարները (հազար տոններով)²

Տարիներ	Քարածնուի	Նավթ Բենզին		Անագ	Ցինկ	Կառուչուկ	Մետաքս	Բամբակ
		(Արկան հեկտալիտրով)	Արկան հեկտալիտրով					
1932	21 109	496	61,9	60,8	287	181	581	145
1933	21 016	482	48,6	45,1	227	183	595	13,1

¹ Ազգերի լեզուայի ամսական վիճակագրական բյուլետեն, Ելեկտրարդյունաբերությունը և տրանսպորտային միջոցների (ավտոմոբիլներ, վագոններ) արտադրությունը սրա մեջ չեն մտնում, դրա գործարեն հավանորեն մտնում են արզական արդյունաբերության մի մասը: ՀԱՄ-ի համար չկա մեքենաշինության ընդհանուր ինդեքս:

² «Վերտշավատ» ունդ Ստատիստիկա («Տնտեսություն ու վիճակագրություն», 1933 թ. № 18, էջ 579,

ա Հունիս:

Խիստ աննշան ավելացում և տեղի ունեցել վերջին տարվա ընթացքում միմիայն կապարի ու կառւչուկի վերաբերմբ հումքի բոլոր մնացած տեսակները կամ լճացած դրություն են ցույց տալիս, կամ նվազում: Այդ պատճառով մինք 1933 թ. յերկուրդ կեսին ցինկի, անագի ու պղնձի արտադրության բավական ուժեղ բարձրացումն ենք տեսնում կարևորագույն յերկիրներում:

4. Պատերազմի ուժեղացրած նոխապատրաստում: Մրա աղբեցությունը պարզ կերպով ցույց է տալիս այն դիսպրոպրօցիան, որը կա պողպատի արտադրության սաստիկ ավելացման և մենատվոր կապատի ամսական աննշան ավելացման միջն, ցեմենտի արտադրության սաստիկ ավելացման և կառուցողական արդյունաբերյան կանգուման միջն: Պողպատի արտադրությունը Գերմանիայում 1932 թ. III յունամյակից մինչև 1933 թ. III յունամյակը բարձրացել է ավելի քան 50%, ֆրանսիայում՝ 20%, Անգլիայում՝ համարյա 50%, մինչդեռ մեքենաշինությունն աճել է միմիայն 10—20% (արտադրված պողպատի ու չուգունի մի մասն ակներեաբար գործադրվել են պաշարները լրացնելու համար):

5. Միջցառումներ աշխատանի մատակարարելու վերաբերմամբ: Պետության, քաղաքների ու համայնքների հասարակական աշխատանքները—ճանապարհների, ջրանցքների, նավահանգիստների շինարարություն, մելիորացիա, ջրմռուղ և այլն, վորոնք ձեռնարկվում են տնտեսական դրությունը բարելավելու և դոր-

1 Տես, որինակ, Ազգերի լիգայի բյուլետենի աղյուսակը, 1933 — էջ 445.

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՅԱՐ ՏՈՆԵՆՔՈՎ.

	Ց ի ն կ	Պ ո կ ն ձ	Ն ա գ թ
	ՀԱՄԱԿԱՐԱԾՈՒՅԹ	ՀԱՄԱԿԱՐԱԾՈՒՅԹ	ՀԱՄԱԿԱՐԱԾՈՒՅԹ
1932 թ. ամենացած ամիսը .	12 029 1 583	7 298 4 243	6 370
1933 թ. վերջին հայտնի ամիսը	31 928 9 774	12 067 9 022	10 874

ծաղութեներին աշխատանք տալու նպատակով: Սակայն այս գործոնը, բացառությամբ Գերմանիայի, վորտեղ աշխատանքների այդ տեսակները կատարվում են պատերազմի նախապատրաստման համար, համեմատաբար փոքր նշանակություն ունի:

Ամենագժաման ինդիքսն եւ պարզել, թե ինչ չափով արտադրանքի ավելացումը ինֆլացիայի հետևանք է հանդիսանում. թե ինչ չափով այն պատերազմի նախապատրաստման հետևանք է և թե ինչ չափով ավելացումը հետևանք հանդիսացավ գերարտադրության գնածամամատական հաղթահարելու այն տեսնեցի, վոր իմանանա և կապիտալիզմին: Այս հարցի պատասխանը կարելի յետորդել տալու միմիայն կոնկրետ վերլուծության հիման վրա, վորին մենք այժմ անցնում ենք:

Ինչ վերաբերում է ինֆլացիային, ապա այն յերկիրներում, վորտեղ վայրուան մինչև այժմ բացառակապես կայուն է, ինչպես թրանսիսյում, կամ այն յերկիրներում, վորտեղ վերջին տարվա ընթացքում վայրուան փաստորեն կայունացված է, ինչպես Անգլիայում, տեղի ունեցավ արդյունաբերական արտադրանքի ավելացում. մյուս կողմից, Անգլիայում 1931 թ. սեպտեմբերին և 1932 թ. առաջին կեսին, յերբ տեղի յեր ունենում փունտի արժեքադրկումը, տեղի ունեցավ արդյունաբերական արտադրանքի վո՞չ թե ավելացում, այլ նվազում:

Մրանից մենք հետեւյալ յեղբակացությունն ենք անում:

1931 թվին, յերբ սկսվեց փունտի արժեքադրկումը, Անգլիայում ինֆլացիոն կոնյունկտուրայի այլ նախադրյալներ չկային. պաշարները պահեստներում դեռ մեծանում եյին, գներն համաշխարհային շուկայում դեռ այնպես սաստիկ ընկնում եյին, վոր նըանք խանգարում եյին գների բարձրացմանն Անգլիայում ինֆլացիայի հետեւանքով. այդ պատճառով ել չկար «փախուստ դեպի նյութական արժեքներ» և ինֆլացիոն կոնյունկտուրա չեր ստացվում:

1933 թվին, յերբ սկսվեց դոլարի արժեքադրկումը ՀԱՄԱԿԱՐԱԾՈՒՅԹ, այնտեղ ինֆլացիոն կոնյունկտուրայի ուրիշ նախադրյալներ ել եյին առկա գատարկված պահեստներ, գնածամամի ժամանակ հետաձգված խոշոր գնումներ, և հատուկ միջոցառումներ—բացի դոլարի

արժեքազրկումից, — վորոնց նպատակը դյուղատնտեսական արդյունքների գները և ընդհանրապես գները բարձրացնելն եր:

Հետեւալ աղյուսակը ցույց եւ առալիս գների փոփոխությունը ամենագլխավոր յերկիրներում:

Մեծաբանակ գների ընդհանուր ինդեքս¹ (1913 թ.=100)

Տ ա ր ի ն ե ր	Անգլիա	ՀԱՄՆ	Դերմանիա	Ֆրանսիա	Ճապոնիա
1929	• • • •	136,5	136,5	137,2	127,3
1930	• • • •	119,5	123,8	124,6	112,5
1931	• • • •	104,2	104,6	110,9	101,9
1932	I յեամսյակ	105,2	95,3	99,9	90,0
1932	II	100,4	92,5	97,3	88,1
1932	III	99,8	93,1	95,5	84,8
1932	IV	101,1	90,2	93,5	83,8
1933	I	98,9	86,4	91,1	81,6
1933	II	99,4	89,8	91,8	79,5
1933	III	102,6	99,9	94,3	80,9
Ամենացած կետը					
	Ապրիլ	Փետրվար	Ապրիլ	Մայիս	Հունիս
	1933 թ.	1933 թ.	1933 թ.	1933 թ.	1932 թ.
	97,2	85,7	90,7	77,8	110,6
Վերջին հայտնի ամիսը					
	Հոկտեմբեր	Հոկտեմբեր	Հոկտեմբեր	Հոկտեմբեր	Օեպտեմբեր
	1933 թ.	1933 թ.	1933 թ.	1933 թ.	1933 թ.
	102,6	102,7	96,0	80,6	137,8

¹ «Ամսական վիճակադրական բյուլետեն», 1933 թ. № 1, էջ 24 և
1933 թ. № 11, էջ 455.

² Վուկու ինդեքս:

Այս թվերը կարելի յե համեմատել միմիայն իրենց շարժման մեջ ժամանակի ընթացքում, այլ վոչ թե միմյանց միջև, վորովհետեւ յուրաքանչյուր յերկրում վերցված են աարեր ապրանքներ և տարբեր տեսակարար կշռով: Սակայն այստեղից կարելի յե հետեւալ յեզրակացություններն անել:

ա) Ֆրանսիայում ու Գերմանիայում, վորոնց վալյուտան մինչև այժմ հիմնված ել վոսկու պարիտետի վրա, գների անկումն իւ ամենացածը կետին հասավ 1933 թ. ապրիլ—մայիսին:

բ) Անգլիայում ֆունտի արժեքազրկումից հետո գների բարձրացումը չի յեղել, վորովհետեւ գների անկումն համաշխարհային շուկայում հասնում եր ֆունտի արժեքազրկման ներգործության հետեւալ (բայց պետք ել ընդգծել, վոր գների անգլիական ինդեքսում գերակշռում ել ներմուծված հումքը. պատրաստի արդյունաբերական ապրանքները համարյա բոլորովին հանդես չեն գտնիս):

գ) Տարբերվելով սրանից՝ ՀԱՄՆ-ում, դոլարի արժեքազրկումից հետո, միանգամից գների բուռն բարձրացում տեղի ունեցավ. փետրվարից մինչև հոկտեմբեր գները բարձրացան 20% ով:

դ) Գների կազմությունը ձապոնիայում ցույց ել առալիս պարզապես արտահայտված ինֆլյացիոն բնույթ:

Այստեղից հետեւում ել այն յեղակացությունը, վոր ձապոնիայում ու ՀԱՄՆ-ում գոյություն ունի վորոշակի ինֆլյացիոն կոնյունկտուրա. ինֆլյացիոն կոնյունկտուրա չկա ֆրանսիայում ու Գերմանիայում (ինչպես նաև ուրիշ յերկիրներում, վորտեղ վայրուտան վոսկու պարիտետի վրա յե հիմնված). սահմանափակ ինֆլյացիոն կոնյունկտուրա գոյություն ունի: Անգլիայում ու ստերլինգյան բլոկի յերկիրներում:

Շատ ալիքի դժվար ել գնահատել ուժեղ կերպով պատերազմի պատրաստվելու ազգեցությունը արտադրության վիճակի վրա: Մենք սխալ ենք համարում այն մեթոդը՝ վորի եյությունն ել իբրև յելակետ ընդունել արտադրանքի կամ սպառազինման համար կարևոր առանձին ապրանքների ներմուծման ավելացումը, վորովհետեւ գրեթե բոլոր տարանքները ներկայումս ուղղակի կամ անուղղակի կերպով ծառայում են սպառազինման նպատակներին:

Այդ պատճառով ել մենք գործադրում ենք սպառազինման վրա կտարքի ծախերի հարաբերական գնահատման արժեքային հաշվարկման միջոցը:

ՈԱԶՄԱԿԱՆ ԾԱԽԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿԵԴԻՌԸ Ո.ՐԴՅՈՒՆԾԲԵՐՈԿԱՆ Ա.ԲԸԱԴԲԱՆՔԻ ՄԵՋ

Տարակույս չկա, վոր արագ կերպով պատերազմի համար նախապատրաստվելը ամենակարևոր մոմենտներից մեկն ե հանդիսանում 1932/33 թ. արդյունաբերական արտադրանքի ավելացման գործում: Մենք հիմա կփորձնոք, բոլոր անհրաժեշտ վերապահումներն անելով, ստանալ թեկուղ և խիստ մոտավոր պատկերացում այդ գործոնի բանական նշանակության մասին, այսինքն՝ վորոշել արդյունաբերական ուսղմական ծախքերի հարաբերական կշիռն արդյունաբերական ընդհանուր արտադրանքի մեջ:

Արդյունաբերական արտադրանքի համախառն արժեքը հաշվասար եր՝ համաձայն առաջին զինում մեջ բերված հաշվարկում ների 1929 թ. համար (միլիոն վուսկի ոռոբլիներով):¹

Ֆրանսիա	Անգլիա	ՀԱՄՆ	Գերմանիա
29 000	39 000	139 000	39 000

Հաշվենք 1932 թ. արդյունաբերական արտադրանքի արժեքը նվազումը 1929 թ. համամատությամբ հետևյալ հիմունքով:²

Ֆրանսիա	Անգլիա	ՀԱՄՆ	Գերմանիա
Արդյունաբերական ինդեքսի անկումը 1929-ից մինչև 1932 թ.	30	17	46
Արդյունաբերական ապրանքների գների ինդեքսի անկումը 1929-ից մինչև 1932 թ.	26 ³	26 ³	27
			25

¹ «Վախենբերիտ» № 32, 8 նոյեմբերի 1932 թ.:

² Ազգերի լիգայի ավյալները, «Բյուլետեն», 1933 թ. նոյեմբեր:

³ Գնահատությունը մերն ե, վորովհետեւ հաշվարկված ինդեքս չկա: — չեղինակ:

Այս հիման վրա 1932 թ. արդյունաբերական արտադրանքի արժեքը վորում ե (միլիոն վուսկի ոռոբլիներով):

Ֆրանսիա	Անգլիա	ՀԱՄՆ	Գերմանիա
15 000	25 000	55 000	18 000

Այդ յերկիրների պաշտոնական ռազմական ծախքերը (առանց կենսաթոշակների ու ռազմապարտքերի տոկոսների) 1931/32 թ. կազմում ելին¹.

Ֆրանսիայում	Անգլիայում	ՀԱՄՆ-ում	Գերմանիայում
17,7 միլիոն ֆ.ստ.	127 միլիոն դոլար.	1 100 միլիոն մարկ	

Վոր ըստ պարիտետի հավասար և մոտավորակես միլիոն վուսկի ոռոբլիների:

1 300	1 270	1 650	500
-------	-------	-------	-----

Բայց այս ծախքերից վոչ ավելի քան 60%-ը գնում ե ամեն տեսակ արդյունաբերական ապրանքներ— զենք, զենատներ և այլն—գնելու վրա. առնվազն 40 տոկոսը ծախսվում է ոռնիկ-ների և սպաների ու զինվորների պարենաւորման համար:

Արդյունաբերական ռազմական ծախերը միլիոն վուսկի ոռորիներով

Ֆրանսիա	Անգլիա	ՀԱՄՆ	Գերմանիա
780	762	990	300

Բացի դրանից՝ ռազմական արդյունաբերության զանազան թագնված ծախքերի կան, վորոնք արտահայտություն չեն գտնելու ջեյի մեջ: Այդ ծախքերն ընդգրկելու համար մենք վերև մեջ՝ բերված թվերին ավելացնում ենք ֆրանսիայի համար 50%, Գերմանիայի համար — 100%, ՀԱՄՆ-ի ու Անգլիայի համար — 25%: Այդ անկասկած ավելի շուտ չափազանցված, քան թե չափազանց շած թիվ և (գուցել՝ բացի Գերմանիայից):

¹ Այս տվյալները մեջ վորքը ավելի բարձր են, քան թե Ազգերի լիգայի «Մազմական տարեգրքի» տվյալները, վորովհետեւ նրանք պարունակում են ուրիշ հոգվածներով բյուջեյի մեջ մտած ռազմական ծախքերի մի մասը:

Այն ժամանակ մենք կստանանք 1931/32 թվի համար բոլոր արդյունաբերական ռազմական ծախքերի, թե բացահայտ կերպով բյուջեյում ցույց տվածների և թե թագնվածների, վերաբերմամբ (միլիոն վոսկի ուռելիներով) —

Ֆրանսիայի համար Անգլիայի համար ՀԱՄՆ-ի համար Գերմանիայի համար
1 170 950 1 237 600

Սա կազմում է արդյունաբերական արտադրանքի տոկոսներով
Ֆրանսիա Անգլիա ՀԱՄՆ Գերմանիա
8 4 2,2 3,3

Թեև այս թվերը նույնիսկ շատ մոտավոր են, թեև հաշվարկման բարդությունը շատ սխալների դուռ ե բաց անում, բայց և այնպես այս տվյալները վորոշ հիմք են տալիս տվյալ յերկը արդյունաբերության համար սպառագինման ծախքերի նշանակությունը գնահատելու տեսակետից¹:

Իդեպ՝ նրանք մոտավորապես համընկնում են Կոնյունկտուր-ինստիտուտի հաշվարկումների հետ², վորը սպառագինման ծախքերը հաշվում ե համաշխարհային արտադրանքի 50%-ը:

Ի՞նչ են ասում մեզ այս թվերը 1933 թ. արդյունաբերական արտադրության բարձրացման պլորեմի մասին:

Յեթե մենք յենթաղրենք, վոր այդ պետությունները 1933 թվին կրկնապատկել են իրենց ծախքերն սպառագինման համար 1931/32 թ. համեմատությամբ, մի բան, վոր բացառությամբ Գերմանիայի անկասկած չափազանցված ե, ապա այս անմիջականորեն կրացատրեր արդյունաբերական արտադրանքի ինդեքսի բարձրացումը (տոկոսներով):

¹ Իմիջի այլոց, տարբեր տոկոսը համապատասխանում է բանակի բնույթին այդ չորս յերկիրներում: Գերմանիայում տոկոսը ցած եր, վորովհետեւ ծանր հրետանին, տանկերը, գծանափերը, բերդերի կառուցումն արգելված եր: Անգլիայում ավելի ցած են, քան Ֆրանսիայում, վորովհետեւ այնտեղ այնպիսի խողոք մշտական բանակ և սահմանագլխի ամրություններ չկան: ՀԱՄՆ-ում այդ տոկոսը շատ ցած է, վորովհետեւ բանակն համեմատաբար մեծ չե, իսկ արդյունաբերական արտադրանքը շատ մեծ ե:

² «Վոխենբերիխ» № 32, 8 նոյեմբերի 1932 թ.:

	Ֆրանսիայի համար մոտավորապես 100%	Անգլիայի » » 4,5 »	ՀԱՄՆ-ի » » 4 »	Գերմանիայի » » 8,2 »
--	----------------------------------	--------------------	----------------	----------------------

Նրանց կողմնակի ազդեցությունն, իհարկե, ել ավելի մեծ ե, վորովհետև թե կիսաֆարբիկատների արտադրությունը և թե արտադրությունը «Բ» բաժնում, զբաղված բանվորների թվի ավելացման հետևանքով, նմանապես վորոշ աշխուժացում ե ապրումքայց կողմանակի ազդեցությունը գնահատելու համար վոչ մի տվյալ չկա: Այն մեծ մասամբ համակցովում ե մեր չափազանցացրած յենթադրությամբ՝ ուղմական ծախքերը 1932/33 թ. կրկնապատկելու մասին 1931/32 թ. համեմատությամբ: Աղյուսով մենք պետք ե հետեւյալ յեղրակացությանն հանգենք ուղմական ծախքերի անմիջական ազդեցության վերաբերմամբ, այդ առթիվ թույլ նույն սաստիկ չափազանցացված յենթադրությունը, թե այն 1933 թվին կրկնապատկվել ե:

ՀԱՄՆ-ի համար ուղմական ծախքերի ավելացումը արդյունաբերական արտադրանքի բարձրացման մեջ նվազագույն դեր է կատարում:

Գերմանիայի համար այն պայմանավորում է մոտավորապես 40% ավելացում: Ֆրանսիայի համար — կեսից ավելի. Անգլիայի համար — մոտ 40%:

Մեղ թվում ե, այնուամենայնիվ, վոր մեր հաշվարկած արդյունաբերը Գերմանիայի համար չափազանց ցած են, իսկ Անգլիայի համար՝ չափազանց բարձր:

Իհարկե, ուժեղացրած ուղմական նախապատրաստության աղդեցությունը պետական պատվերներով չի սպառվում: Յեթե մասնավոր կապիտալիստներն առաջիկա պատերազմի հուսով պահանջներում կուտակում են գունավոր մետաղները կամ թթվագլայնում են արհետական մետաքսի ձեռնարկությունները, ապա այս ճիշտ նույնպես արդյունաբերական արտադրանքի բարձրացման տարր հանդիսանում է անդամական նախապատրաստման վրա: Բայց այդ մոմենտը քանակապես արտահայտել անկարելի յե:

Այդպիսով մենք գալիս ենք հետևյալ յեղրակացությանը։ Արդյունաբերական արտադրանքի ավելացումը, սկսած 1932 թվից մինչև 1933 թ. աշունը չի կարելի (բացառությամբ ձապոնիայի) տամբողջությամբ վերագրել ուղմական նախապատրաստման ու ինֆլյացիայի ուժեղացմանը։ Անկասկած՝ մի մասն արդյունք ե ամեն մի ցիկլային ճգնաժամ հաղթահարելու կապիտալիզմին հատուկ ներքին մեխանիզմի ազդեցության։ Այստեղից ի՞նչ ե հետևում այժմյան դրության գնահատման համար։

Բոլոր վերապահումներով, վորոնք անհրաժեշտ են համաշխարհային կապիտալիզմի այսպիսի նոր ու բարդ դրությունը գնահատելիս, մենք թույլ կտայինք մեզ պնդել հետևյալը։

1. Արդյունաբերական արտադրանքի (ինչպես նաև արտաքին տունքի) ու գների անկման ամենախոր անկումն համաշխարհային մասնաբոլ արդեն անց է կացված։ Արդյունքամբ աճող սպառագինությունների ժամանակ չի կարելի յենթադրել, վոր համաշխարհային արդյունաբերական արտադրությունն այս ցիկլում 1932 թ. կեսի մակարդակից ավելի ցած ընկնի (առանձին յերկիրներում այս հնարավոր ե ու մինչև անգամ հավանական)։

2. Արդյունաբերական ցիկլը 1933 թ. վերջին գտնվում ե այն փուլի մեջ, վոր մենք կրնորոշեյինք կամ իրրե Շարդյունաբերական նգնածամբ օարունակություն մեղմացած ձևով, կամ ավելի ճշշտ—բոլոր անհրաժեշտ վերապահումներով—իրրե Շարդյունական կապիտալիզմի ընդհանուր նգնածամբ ու կայունացման վախճանի հիմքի վրա։

Այս բնորոշումը պարունակում ե իր մեջ հետևյալը։

ա) Խոսք վերաբերում ե վա՛ թե նորմալ դեպքասիալին, այլ առանձնահատուկ դեպքասիայի՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիմքի վրա։ Գլխավոր տարրերությունն այժմյան դեպքասիայի ու նախապատերազմյան ժամանակի դեպքասիայի միջև այն ե, վոր այժմյան դեպքասիան հաստատուն հիմք չի ներկայացնում աշխատացման ու ծաղկման անցնելու համար։ Արդեն նախորդ ցիկլի ժամանակ մի շարք յերկիրներ ու արդյունաբերական ճյուղեր ծաղկման փուլ չունեցան։ Այս ցիկլի ժամանակ, վորն ակներևաբար ընդհատվելու յե նոր համաշխարհային պա-

տերազմով, այդ ավելի՛ պակաս չափով տեղի կունենա։ Կապիտալիզմի ընդհանուր նգնածամի արգելակիչ ազդեցությունը—հիմնական կապիտալի խռոնիկական առատությունն ե, վորն առանձնապես դժվարացնում ե վերջնիս լայն նորոգումն ու ավելացումը, առանց վորի իսկական աշխատացումն ու ծաղկումը անկարելի յե։ Խռոնիկական ագրարային նգնածամը, հսկայական խռոնիկական գործազրկությունը և ներքին շուկայի այստեղից բղխող սեղմվելը և այլն այս ցիկլի ժամանակ շատ ավելի ուժեղ կերպով ե յերևան գալիս, քան նախորդի ժամանակ, վորովհետև տնտեսական ճգնաժամը խորացրեց ու սրեց կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամը։

բ) Խոսքը վերաբերում ե «գեպրեսսիային» կապիտալիստական կայունացման վերջի պայմ աններում։ այս նշանակում ե ներքին ու արտաքին հակասությունների սրում, վորը (սրումը), մի կողմից, ընդհանրական անվատահության հետևանքով՝ կասեցնում ե ամեն մի նոր ինվեստիցիոն գործունեյություն (առանձնապես՝ կապիտալի ամեն մի եսքորդ), բացի բուն ուսզմական արդյունաբերությունից։ Մյուս կողմից, պատերազմի աճող նախապարագաստումը առաջ ե բերում ուղմական արդյունաբերության պատվերների ավելացում։

Մոտալուտ պատերազմի հեռանկարն առանձնապես արգելակիչ կերպով ե ներգործում նաև հնացած հիմնական կապիտալը նորով փոխարինելու վրա։ կապիտալիստները չեն շտապում վոշընչացնել հին գործարանները, վորովհետև նրանք հույս են տածում, թե պատերազմի դեպքում այդ հնացած ձեռնարկություններն ել բարձր շահույթ կտան։

գ) Վարկային սիստեմի խոր քայլքայումը, վայրուտաների սաստիկ տատանումները, առանձին կառավարությունների՝ արհեստական աշխատացում առաջ բերելու տենդային ջանքերն, այն հետևանքն ունեն, վոր դեպքասիան խիստ շարժուն կլինի —սեպ վերելքներով ու սուր անկումներով, վորոնցով այն տարբերվում ե նորմալ դեպքասիայի համեմատաբար սահուն ընթացքից։

Դեպքասիան հաղթահարելու արգելք հանդիսացող հետագա գործոնը մոմովովիաների՝ նգնածամի ժամանակ սաստիացած սեղ-

ծումն ե: Ճիշտ ե, միջազգային կարելիները՝ ճղնաժամի ժամանակը շուկայի համար բացառիկորեն սրված պայքարի հետևանքով բայցայիլու տենտենցին են ցույց տալիս (պղնձի կարտելը, լուցկու տրեստը քայլայիցին, պողպատի յեկրոպակական տրեստը գույություն ունի իսկապես միմիայն թղթի վրա): Իրեւ դրան հակածիու նզնաժամի ժամանակ տռանձին յերկրուներում սասիկ ավելացել են կենտրոնացումն ու նոր մոնոպոլիաների ծագումը: Իտալիայի, Գերմանիայի ու Լիխաստանի ֆաշիստ կառավարիչները շատ դեպքերում հատուկ կարգադրությունների միջոցով հարկադրում եյին առևտուսայդերներին կարտելների մեջ մտնել: Ռուզվելտի որենսդրությունը վո՞չ միայն վերացրեց կարտելները ու տրեստներ կազմակերպելու բոլոր իրավաբանական արգելքները, այլև քաջալերում և նրանց կազմակերպումը: Անգլիայում պրոտեկտոնիդմի պաշտպանության ներքո սկսվել ե մենաշնորհների արագ գարգացումը: Մենաշնորհացման այդ աճումն ել ավելի յեսդում ներքին շուկան և արգելք և հանդիսանում կոնյունկտուրան լավացնելու դեմ:

Վերջապես, անհրաժեշտ ե մատնանշել նաև ռազիոնալացման հատուկ բնօւյրը նզնաժամի ժամանակ: Խացիոնալացման նպատակը ինքնարժեքի իջեցումն ե: Վաճառահանման շուկայի ներկությունը հարկադրում և կապիտալին ներկայումս ինքնարժեքի իջեցման այնպիսի մեթոդներ գործադրելու, վորոնք կապված չեն արտադրական կարողության վոչ մի ընդլայնման հետ, հակառակ այն դրության, վոր գոյություն ուներ առաջ, յերբ հույս եյին տածում ապրանքներն եժանացնելու միջոցով հնարավոր դարձնելու շուկայի ընդարձակումը: Այս բանն զգալի չափով հաջողվեց անել աշխատանքի ինտենսիվությունը բարձրացնելու միջոցով, աղամարդկանց աշխատանքը կանանց ու յերեխաների աշխատանքով փոխարինելու միջոցով, արտադրանքի միավորի համար տրվող աշխատավարձի չափերը սաստիկ իջեցնելու միջոցով: Ինքնըստինքան հասկանալի յե, վոր սացիոնալացման այս մեթոդներն ել ավելի յեն սրում վաճառահանման պլորեմը: Այդ պատճառով եր վաճառահանման համար մզվող պայքարը շարունակվում ե չթուացող սրությամբ: Ճգնաժամի ժամանակ կառավարվող սացիոնա-

լացման այս առանձնահատկությունից հետեւմ ե նաև, վոր արդյունաբերական արտադրանքի ավելացումը 1932 թ. կեսից սկսած բանվոր դասակարգի գրության վրա միմիայն նվազագույն չափով ե արտացոլել և չի մեղմացրել բությունագիտայի ու պրոլետարիատի միջև յեղած հակասությունների ծայրահեղ սրությունը: Առավել ես. վոր կապիտալը, վորը 1931/32 թ. վասոներ եր կրում, սացիոնալացման այդ առանձնահատկությունների հետեւնքով, ըստ յերկութիւն, նորից սկսել ե շահույթներ ստանալ, մինչդեռ պրոլետարիատի աղքատությունն անփոփոխ ե մնում:

Այս բոլորից հետեւմ ե, վոր այժմյան «գեպիսսիան» վոչ մի դիմքում դեպքեափառ չի հանդիսանում այդ բառի սօվորական խմասով: Սակայն, չնայած դրան, մենք կարծում ենք, վոր նպատակահարմար և արդյունաբերական ցիկլի այժմյան փուլը տարբերել նրա մինչև 1932 թ. կեսն ունեցած փուլից, յերբ ճգնաժամը գեռ համար համարհային մասշտաբով խորանում եր:

Մեր առաջ մզած զրութների լուսաբանության համար մենք տալիս ենք համառոտ տեսություն ճգնաժամի ընթացքի մասին վճռողական կապիտալիստական յերկիրներում:

ՃԳՆԱԺԱՄԱՐԴԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

Յեթե քննարկենք միմիայն արտաքին սիմպտոմները, ապա անգլիական տնտեսությունը 1933 թվին ցույց է տալիս դեպրեսիայի բնորոշ գծեր: Նրանցից կարևորագույններն հետեւյալ ներն են:

ա) Արդյունաբերական արտադրանքն 1931 թ. սկսած անընդհատ վերելք և ցույց տալիս: Ինդեքսը հետեւյալն եր¹ (1928 թ. = 100).

	1931 թ.	1932 թ.	1933 թ.
	77,1	82,2	87—88 ²

¹ Բոլոր տվյալները յեթե հատուկ վերապահում չի արված, վերցրած են Աղգերի լիգայի բրուետենից, 1933 թ. № 11.

² Տվյալներ մինչեւ տարվա վերջը գեռ չկան:

բ) Անդիան—միակ յերկիրն և աշխարհում, վորտեղ քնակարանային ժինարարության վորոշ աշխատացում կա, մի բան, վորդեպրեսսիայի փուլի բնորոշ տարր և հանդիսանում:

գ) Դրամական ըուլայում շատ ազատ փող կա և վարկային սիստեմն աշխատում և նորմալ կերպով: Վայուտան, 1931 թ. աշնանը վոսկու ստանդարտից հրաժարվելուց հետո, վոր համընկավ ճգնաժամի ամենամեծ խորության հետ Անդիայում, արդեն մի տարի յեւ կայուն ե (փոքրիկ տատանումներով): Բյուջեն հավասարեցված ե և ընթացիկ տարում բավական մեծ ավելցուկ ե տալիս (միակ խոշոր յերկիրն աշխարհում): Պետական պարտքերի հսկայական կոնվերսիան իրականացվեց հաջող կերպով: Սկսվել է կապիտալի եմիսսիայի թույլ աշխատացում:

Կապիտալի նոր եսխախան: Միջին ամսական տվյալները
(միլիոն մուն ստերլինգներով)

1931 թ.

1932 թ.

1933 թ.
(առաջին 10 ամիսները)
7,4

9,4

11,5

դ) Կան հիմնական կապիտալի նորոգման ստույր: Կառուցվում են պողպատի մեկյերկու նոր ձեռնարկություններ, միքանի խոշոր ձեռնարկություններ՝ ածուխից բենզին ստանալու համար: Վերջին շաբաթների ընթացքում պատվիրված է 12—15 նոր խոշոր նավ: Մեքենաշեն արդյունաբերության վերջին ինդեքսը կազմում է 82,9 (1928 թ. = 100):

ե) Արտաքին առևտորի կրածումը կանգ և առել արտահանումը գերջին ամիսների ընթացքում, թեպետև շատ դանդաղ կերպով, ընդլայնվում է:

Արտաքին առևտորը: Միջին ամսական տվյալները
(միլիոն մուն ստերլինգներով)

Ներմուծում

1932/33 թ.

(առաջին 10 ամիսները)

54,3

Արտահանում

1932/33 թ.

(առաջին 10 ամիսները)

30,4

1933 թ.

30,3

Յեպտեմբեր Հոկտեմբեր Հոկտեմբեր

32,2

34,1

դ) Արդյունաբերական ակցիաների կուրսերն 1933 թվի ընթացքում անընդհատ բարձրացումն են ցույց տալիս (1924 թվի ինդեքսը = 100):

1932/33 թ.	Հուլիս	Ոգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր
(առաջին կեսը)				1933 թ.
	84	95,5	108	106
				110
				115

Այս բոլորն Անդիայում ուժեղ լավատեսություն առաջ բերեց բուրժուազիայի շարքերում: Բանկերի ամսական բյուջետենակար, թե կառավարական կուսակցությանը պատկանող և թե ոպողիցիայի անդամ պետական գործիչների հայտարարությունները համերաշխում են միյանց հետ այն բանում, թե ճգնաժամի ամենամեծ խորությունն Անդիայի համար հաղթահարված է:

«Յերկրի գրությունն անտարակույս ներկայում շատ ավելի բարենպաստ պատկեր ե ներկայացնում, քան թե չմի տարի առաջ», — ասում ե ֆինանսների մինիստր Զեմբերլինը¹:

«Մեծ Բրիտանիան ակներեորեն տնտեսական առողջացման ձանապարհին ե գտնվում: Նա իրական ու վերջնական հաջողություններ ե ձեռք բերելու, — ասում ե Լոյդ Չորջը²:

Պետք ե ընդունել, վոր անգլիական բուրժուազիան — այժմյան կառավարող դասակարգերից ամենահինն ու ամենափորձվածն աշխարհում — նվաճմամբ ծամանակ ավելի հաջող մանդատներ կտարեց, քան մյուս բոլոր յերկիրների բուրժուազիան: Այդ մանյուրներից ամենակարենրները, մեր կարծիքով, հետեւալներն են:

1. Ֆունս ստերլինգի դրի պահպանումն իրեւ համաշխարհային վայրության, չնայած վոսկու ստանդարտից նրամարդկուն: Յերբ 1931 թվի աշնանը վոսկու սաստիկ արտահանման հետևանքով վոսկու ստանդարտից հրաժարվելու անխուսափելի դարձավ, անգլիական բուրժուազիան ոգտագործեց այդ, մի կողմից, նրա համար, վորպեսզի սահմանափակի ներմուծումը և ընդլայնի արտահանումը. մյուս կողմից, այդ բուրժուազիան բոլոր միջոցները

¹ «Տայլս», 4 նոյեմբերի 1933 թ.:

² «Պետական Լոյդ», 22 հոկտեմբերի 1933 թ.:

ձեռք առավ, վորպեսզի սահման դնի վայուտայի արժեղրկմանը: Կազմակերպվեց լայն ու հաջող կամպանիա՝ վոսկին եմիսսիոն բանկին հանձնելու համար. Հնդկաստանից Անգլիա քաշեցին 1. միլիարդ վոսկի ոռուպի: Անգլիական բանկի վոսկու պաշարն այժմ 192 մլիոն ֆուն է, — ավելի քան յերբենից յեղել է: Ապա, շնորհիվ այն հանգամանքի, վոր Անգլիան հարկադրեց իր գոմինիոններին, Հնդկաստանին, ինչպես նաև տնտեսապես Անգլիայից կախված Դանիային, Նվերիային, Նորվեգիային, Եստոնիային, Փորտուգալիային, Արգենտինային, Բրազիլիային և այլն — իրենց վայրութան ֆունն ստեղնիքի հավելու դարձնել (այսինքն՝ պահպանել իրենց վայրութայի հաստատուն կուրսը ֆունտ ստերլինգի վերաբերմամբ, հաշվի չառնելով ֆունտ ստերլինգի տատանումները վոսկու համեմատությամբ). — ֆունտ ստերլինգը ներկայումս համաշխարհային ռազմական վայրութա յե հանդիսանում աշխարհի մի մասի համար, վոր 600 միլիոն բնակչություն ունի: Այս հանգամանքն Անգլիային մեծ առավելություններ ե տալիս համաշխարհային առևտութի մեջ:

2. Ավելի քույլ պետքանեներին առանց բավելու տնտեսապես իրեն յենթարկելը: Անգլիան առանց քաշվելու ոգտագործեց իր դրությունն իբրև ներկայումս սննդամթերքներ ներմուծող միակ խոշոր յերկրը, վորպեսզի ագրարային ճնաժամով բռնված ներկրների վզին փաթաթի ամենածանր պայմանները նոր առևտրական պայմանագրերում: Որինակ՝ Դանիան ստիպված եր պարտավորվելու՝ Անգլիայում ճնելու իր գործածած քարածուխի, յերկաթի ու պողպատի 80% ը, այնպես վոր վորոշ իմաստով այդ յերկրը ներտառած ե անգլիական ներքին ռուկայի մեջ: Նույնպիսի ստորացուցիչ պայմաններ փաթաթվեցին նաև մյուս ագրարային պետությունների վզին:

3. Վճռական տնօւմն արդյունաբերական պրոտեկցիոնիզմին. Մաքսերի ու կոնտինգենտների միջոցով Անգլիային հաջողվեց յերկու տարվա ընթացքում կիսով չափ իջեցնել արդյունաբերական ապրանքների ներմուծումը:

¹ Առա թե ինչպիսի մանրանդրությունների յե հասնում բանը. Թանիայից Անգլիա ներմուծվող բեկոնը պետք ե փաթաթված լինի անգլիական արդյունաբերության արտադրած ջուտե պարկերի մեջ:

Արդյունաբերական տպանական ներմուծումը միլիոն ֆուն ասերիններով կազմում եր:

I յեռամսյակ	II յեռամսյակ	III յեռամսյակ
1931 թ.	62,2	62,1
1933 թ.	34,8	36,2

Յեթե հաշվի առնենք ֆունտ ստերլինգի այդ ժամանակվա ընթացքում տեղի ունեցած արժեզրկումը, ապա ներմուծումն իր նատուրալ արտահայտությամբ կեսից ավելի յե ընկեր:

Սակայն առկա յե նաև մեղալի մյուս յեթեսը: Անգլիայի տնտեսական միջոցառումների եյությունն ուղղված ե այն նպատակին, վորպեսզի բարելավի իր դրությունը մրցակիցների հաշվին համաշխարհային ռուկայում, Քանի վոր Անգլիան հզոր գաղութային յերկիր ե հանդիսանում և մեծ ոեղերմներ ունի, ապա այս բանը վորոշ չափով հաջողվեց անգլիական բուրժուազիային:

Բայց հենց դրանում ե նաև անգլիայի դրության բուլությանը: Բարեկամումը միմիայն աննշան չափով ե ցիկլի ճնորմալ գարգացման հետեւանք հանդիսանում: Յերկաթի ու պողպատի արտազրությունն ավելանում ե ամենից առաջ այն պատճառով, վորովհետև մաքները կտրել են ներմուծման ճանապարհը: Այս բանն հնարավորություն ե տալիս նոր մետաղագործական ձեռնարկություններ հիմնելու: Ոպտիկական ապրանքների, խաղալիքների և այլն վրա գրված արգելամաքսերը գերմանական ձեռնարկություններին հարկադրեցին Անգլիա տեղափոխվել: Ծանր արդյունաբերության արտահանումը զարգանում ե առևտրական պայմանագրերի միջոցով գուրս մղված մրցակիցների հաշվին, ինչպիսիք են՝ Գերմանիան, Լեհաստանը և այլն: Պարզ ե, վոր այդ բարելավումը չի կտրող տեսական լինել, յեթե մյուս կապիտալիստական յերկիրների դրությունը չլավանա:

Այնուհետև, պետք ե բոլոր ուժով ընդգծել, վոր Անգլիայի արդյունաբերական արտադրանքի ավելացումը վերշին 1½ տարվա ընթացքում սկսվեց սա ավելի ցած մակարդակից, բան մյուս յեր-

¹ Եկոնոմիստ, 21 հոկտեմբերի 1933 թ.:

կիրմերում: Արդյունաբերական արտադրանքի այժմյան մակարդակը՝ Անգլիայում ընդհանուր առմամբ $170\%-\text{ով}$ ցած է 1913 թ. մակարդակից¹: Բարելավութիւն Անգլիայում տեղի յեւ ունենում բացարիկ ցած մակարդակի վրա, վոր վորոշվում եւ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամով:

ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ՃԳՆԱԺԱՄԻ ընթացքի կարևորագույն առանձնահատկությունները Գերմանիայում հետևյալներն են:

1. ՃԳՆԱԺԱՄԻ առանձնապես կործանիչ ազդեցություն ունեցավ Գերմանիայում մի կողմից՝ գերմանական կապիտալիզմի բարձր զարգացման հասած մոնոպոլիստական բնույթի, իսկ մյուս կողմից՝ գաղութների բացակայության, ոտարերկրություն խոշոր պարտքերի ու ռեպարացիոն պարտավորությունների միջև յեղած ներքին հակասության պատճառով: Գերմանական բուրժուազիան հնարակություն չունի նգնաժամի ծանրության մի մասը գաղութների ու կախյալ յերկիրների վրա գցելու, ինչպես այդ անում են անգլիական ու ֆրանսական բուրժուազիան:

2. Գերմանիայում արդյունաբերական ճգնաժամը վաղ սկսվեց (արդյունաբերական արտադրանքը՝ 1930 թվին արդեն միջին հաշվով ընկավ մինչև $90\%-\text{ը}$) (1928 թ. = 100) և շատ մեծ խորության հասավ (ամենամեծ անկումը՝ 1932 թ. ոգոսականը՝ $58,5\%$):

3. «Ա» բաժնի արտադրանի անկումը նկատելի յեւ առանձնապես («Ա» բաժնի ինդեքսը՝ ամենամեծ անկման ժամանակը՝ $47,5\cdot$ ի, «Բ» բաժնինը՝ $74,9\cdot$ ի), Այս բանն հետևանք եւ հիմնական կապիտալի առանձնապես ուժեղ աճման՝ ճգնաժամից առաջ տեղի ունեցած ռացիոնալացման շրջանում և կապիտալի ամեն մի ներդրման լիազար դադարեցման հետևանք՝ ճգնաժամի ժամանակ:

4. Վարկային նգնաժամը Գերմանիայում առանձնապես սուրկերպարան ընդունեց: Ռացիոնալացման շրջանի խոշոր կապիտալային ներդրությունները խոշոր չափով ֆինանսավորված ելին խոշոր

բանկերի ուստեղից կարնածամկետ վարկերի հաշվին: ՃԳՆԱԺԱՄԻ ժամանակ՝ 1930 թ. կեսից մինչև 1931 թ. կեսը՝ այդ ուստեղից վարկերի նշանակալից մասը մեջտեղից հանված ե, վոր և 1931 թ. ամռանը բանկային կատաստրոֆի հասցըց. գերմանական չորս Դարանկերից յերկուսը՝ Դարմշտադտինն ու Դիբեգենինը՝ սնանկացան. հարկ յեղավ ոժանդակություն ցույց տալ նաև յերրորդին՝ Դոյչե բանկին: Գերմանիայի բոլոր վարկային հաստատություններն այն որվանից իրապես կարողանում են գոյություն պահպանել միմիայն պետական ոժանդակության շնորհիվ: Ուստարերկրյա կարճաժամկետ պարտքերի վճարությունները մասսամբ վասկով եյին կատարվում: Այդ պատճառով Գերմանիան գրեթե ամբողջով վրկվեց վոսկու իր պաշարից. 1928 թվի 2729 միլիոն մարկից այժմ 400 միլիոն մարկից ել պակաս և մնացել: Բանկնունների վոսկով ապահովումը կլոր թվով կազմում է 10% :

5. Բանկային կրախի հետևանքները գեռ մինչև այսոր ել ծանրանում են գերմանական եկոնոմիկայի վրա: Դրամական ռուկան խիս սեղմված ե. տոկոսային դրույքը մոտավորապես 4 անգամ ավելի բարձր ե, քան Ֆրանսիայում կամ Անգլիայում: Բանկերի պորտֆելները լի յեն միանգամայն անպետք մուրհակներով, վորոնք հարկ ե լինում շարունակ յերկարաձգել: Կտակիտաների տուկան բոլորը մեռած ե: Կապիտալի նոր եմիսիան՝ 1932 թվին ամսական միմիայն 12 միլիոն՝ մարկ եր. 1933 թվին (առաջին ութ ամիսները) ամսական միջին եմիսիան կազմում եր 9 միլիոն մարկ, այսինքն՝ գործնականորեն զրոյի յեր հավասար: 1927—1928 թ. կապիտալի եմիսիան յերկրի ներսում ամսական 100 միլիոնից ավելի յեր, բացի արտասահմանից յեկած կապիտալից:

6. Գերմանիան բուրժուազիան վարկային նգնաժամի ծանրությունը մասսամբ զցեց ուստեղից վարկաների վրա. վճարությունների տարկետման պայմանագրի մեջ պայմանավորված եր՝ ուստարերկրյա կարճաժամկետ փոխառությունների համար՝ մորատորիում, իսկ յերկարաժամկետ փոխառությունների հաշվին՝ վճարվում ե ժամկետավոր տարեկան վճարների միմիայն կեսը: Ուսպարացիոն վճարությունը փերջնականապես ջնջված

¹ «Կոնյունկտուր-ինստիտուտ», հիշատակված հավելված № 31, եջ 65:

են Սակայն այդ ոգուաը ձեռք բերվեց Գերմանիային միջազգային վարկային սիստեմից գրեթե լիովին վտարելու և մարկը վորոշիմաստով հներքին վայուտա» դարձնելու գնով:

7. Չնայած վարկային սիստեմի քայլայմանը՝ գերմանական բուրժուազիան մինչև այժմ պահպանում է մարդի վոսկու պարփեսը արտաքին առեւտրի հեռու գնացող կարգավորման, վայուտայի ու գերմանական մարկի արտահանման միջոցով և այլն: Դրա պատճառն ամենից առաջ մարկի նոր արժեզրկման հետ կապված սոցիալական հետեւանքների յերկյուղն ե, արժեզրկում, վոր մի անգամ սկսվելով՝ կարող ե գերմանական տնտեսության ընդհանուր խախտվածության հիման վրա արագությամբ կատաստրոֆիկ չափերի համեմ՝ Բայց արհեստականորեն պահպանվող այս վոսկու պարիստուը վոչ մի ընդհանուր բան չունի իսկական վոսկու ստանդարտի հետ:

8. 1932 թ. կեսից նկատելի յե արդյունաբերական արտադրանքի ավելացում և զբաղված բանվորների բանակուրյան անում—պատճառ ավյաների համաձայն: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը (1928 թ. = 100) ամենամեծ անկման կետից — 1932 թ. հուլիսին 58,5—1933 թ. սեպտեմբերին բարձրացավ մինչև 72: Այսպիսով մենք 23% աճ ունենք, վորը հավասար չափով տարածվու ե «Ա» և «Բ» բաժինների վրա: Արտադրանքի ավելացումը՝ առաջին յենթաբաժնի մեջ սուր հակասության մեջ ե գտնվում կապիտալի եմիսսիայի լիակատար կանգառման հետ:

Արտադրության միջոցների արտադրության արտադրանքի բարձրացման մեջ դեկավարող դեր ե կատարում պատերազմի բացահայտ ու գաղտնի նախապատրաստությունը, պետական միջոցառումներն աշխատանքները ստեղծելու համար, նանապահների կառուցումն, մելիօրատիվ տօխատները (իրապես մեծ մասամբ բերդերի կառուցում), տրանսպորտային նյութերի խոշոր պատվերները՝ պետական յերկաթուղիների համար, վորոնք պետք են լինելու միմիայն պատերազմի դեպքում, հարկերից ազատելը նոր սարքավորման ու ավտոմոբիլների վերաբերմամբ (բանակի մոտորիզացիայի նախապատրաստում), պետական ոժանդակություն-

ները տների վերանորոգման, վերակառուցումների և այլնի համար:

9. Ազգարային նզնաժամը վեցշին տարիների ընթացքում բրիգաժան սրբազնության գների ինդեքսը 1931 թվի հունիսի 105-ից ընկավ մինչև 81-ը 1933 թ. հունվարին: Դների այդ սատիկ անկում այն փաստի հետեւանքն եր, վոր հացի, անասունների ու կաթնամթերքների աճող ներքին արտադրությունը հասնում-անցնում եր պակասած սպառումից: Հացի ու մաի յերկար անկնկալած ինքնահայթայթման՝ հասնելուց հետո՝ հովանավորական գների ամբողջ հին սիստեմը (մաքսեր, ներմուծման սահմանափակում), վոր մինչև այժմ հասնում եր իր նպատակին: այժմ խորտակվեց: Հիտերի կառավարությունն ատիպած եր նոր միջոցներ ձեռք առնել ինչպես՝ ցորենի ու աշորայի պետական մոնոպոլ գներ, յեգիպտացորենի, կերերի ու ճարպերի ներմուծման պետական մոնոպոլիա, հացի գեմպինգային արտահանում և ալլն: Այդ միջոցով հաջողվեց գյուղատնտեսական մթերքների գները 81-ից բարձրացնել մինչև 94-ը նոյեմբերի սկզբին: Պլանի ելությունն այն ե, վոր ել ավելի բարձրացվի ճարպերի գները, վորպեսզի կրկին շահավետ գառնա յուղատու բույսերի՝ ռապսի, յուղասերմերի — մշակությունը Գերմանիայում, և հնարավոր դառնա ճարպերի մաքսիմալ ներքին հալթայթումը պատերազմի ժամանակ:

ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ ՓՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ճգնաժամի ընթացքը Ֆրանսիայում հետեւալ առանձնահատկություններով ե բնորոշվում:

1. Արտադրության անկումը Ֆրանսիայում ուշացումով հանդես յեկավ. 1930 թվին արտադրանքը գեր մի փոքր ավելի բարձր եր, քան 1929 թվին:

2. Արտադրության անկումը բարեւակվեց համեմատաբար կարևորական անկումը՝ հազիվ յերկու տարի: Արդեն 1932 թ. կեսին արտադրությունը նորից սկսեց բարձրանալ:

Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը
(1928 թ. = 100)

1929 թ.	1930 թ.	Ամենացած մակարդակը	Ամենաբարձր հուլիս	Վերջին ամս վարչություն
		1932 թ.	1933 թ.	վարչություն
109,4	110,2	72,4	88,2	85,0

Արտադրանքի այժմյան մակարդակը մոտավորապես $100\% \text{-ով}$ ավելի բարձր է, քան թե 1913 թ. (հաշվի առնելով այժմյան ավելի բարձր է առաջնակալից չափով ավելի բարենպաստ տերիտորիան), այսինքն՝ նշանակալից չափով ավելի բարենպաստ է, քան Անգլիայում:

3. Բոլոր մյուս լերկիրներին հակառակ՝ «Բ» բաժնի արտադրանքի անկումն ավելի ուժեղ է, քան «Ա» բաժնինը: Դրա համար լրիվ բացատրություն գտնելը դժվար է: Ակներևորեն ազդում էն հետեւյալ մոմենտները:

ա) Խեցիոնալացումը ճգնաժամից առաջ ֆրանսիայում հաշմատաբար մեծ չեր, այդ պատճառով ել արտադրական սարքավորման այնքան մեծ ավելցուկ չկար: Անա թե ինչու մեքենաշենք արդյունաբերության ինդեքսը ֆրանսիայում ճգնաժամի ժամանակում մի անգամ $67\% \text{-ից}$ ավելի ցած չի ընկեր:

բ) Նավահանգստային հակառական շինարարական աշխատանքները¹, ջրանցքների կառուցումը, արևելյան սահմանի ամտանքումը, ուղղամական արդյունաբերության սաստկացած գործուրացումը, ուղղամական արդյունաբերության սահմանը համար:

գ) Պերճանքի առարկաների արտադրության առանձնապես սաստիկ անկումը ճգնաժամի ժամանակի:

(Անհրաժեշտ ե, սակայն, նկատել, վոր ֆրանսական վիրաբերությունն ընդհանրապես խիստ անվատահելի յե, և այդ ճակարտությունն սակայն վերջին առաջնորդեն, բացատրվում է պարզապես հենց շեղման մի մասը, հավանորեն, բացատրվում է պարզապես հենց այդ իրողությամբ).

1 Ֆրանսիայի խոշոր ծովային նավահանգիստները — Մարսել, Հավր, Շյունիկիրսենը և Բորդոն վերջին առաջնորդելի ընթացքում արմատականորեն վերակառուցված ու ընդլայնված են:

4. Ճգնաժամի ամբողջ տևողության ընթացքում ֆրանսիանը միակ խոշոր արդյունաբերական յերկիրն եր մնում, վոր պահպանում եր վոսկու ստանդարտը: Յերկրում վոսկու ահազին պապական կուտակվեց, վորովհետեւ մեջտեղից հանվեցին այն կապիշար կուտակվեց, վորովհետեւ մեջտեղից հանվեցին այն կապիշար կուտակվեց, վորոնք իբրև կարձամակնետ փոխառություններ տրված ելին արտասահմանին, և ոտարերկրյա շատ կապիտալներ վայ արժիտալներ վայ արժեղայի արժեղայիման յերկյուղից ֆրանսիա հոսեցին: Բանկնությունայի օրանուղական թերությունը (թեև ճգնաժամի ժամանակ ավելացել եր 25% -ով) 100% -ով ապահովված է վասկով: Այդ պատճառով ել շուրջայում ամբողջ ժամանակը շատ ազատ գրամ կար և վիթխարի կապիտալներ մնում եյին չոգտագործված: (ֆրանսական բանկը 25 միլիարդ ավանդներ ունի, վորոնց համար նա վոչ մի տոկոս չի վճարում): Վարկային ճգնաժամն համեմատաբար խորը չեր խոշոր ձեռնարկություններից սանակացան միմիայն միքանի սպեկուլյատիվ ձեռնարկությունները: Զնայած գրամական ուղարկում յեղած առաջությանը, կապիտալների եմիսիան մինիմալ եւ մինչև անգամ դեռ 1933 թվին ել այն անկման տեսնդենց եւ հայտաբերում 1932 թ. համեմատությամբ: Արդյունաբերական ակցիանցիների կուրսերը 1933 թվին բարձրացում չեն տալիս. լրացրական տվյալներով դատելով՝ նիմնական կապիտալի նորագման վորև սկզբնավորարյան վոչ մի նշան չկա:

Ֆրանսիան ստիպված է շարունակ պայքարելու բյուջետային գովարությունների դեմ, վորովհետեւ տիրապետող զասակարգի սիստեմատիկ կերպով խուսափում են հարկեր վճարելուց: Մինչդեռ, յեթե նկատի ունենանք, վոր պետական յեկամուտների մի մասն՝ առանձնակիրորեն մուծվում է ամորտիֆացիոն դրամարկղը՝ և ծախսվում է պետական պարտիալ հանգենելու հաղամատարակը:

1 1931/32 բյուջետային տարում (միլիարդ ֆր.):
Ցեղամատներ 47,7
Ծախսեր 53,3

Դեֆիցիտ	5,6
Ամորտիֆացիոն դրամարկղը վճարել եւ պետական պարտիկեր	7,8
Մասնակիությունը բյուջեյից	2,2

մար, դեֆիցիտն ամեննեին այնքան մեծ չե, ինչպես կարելի յեր դատել պարլամենտական աղմուկից¹:

Վերջապես հիշատակենք այն, վոր, չնայած վոսկու ստանդարտի պահպանմանը, Ֆրանսիայի բաժինը համաշխարհային արտահանության մեջ ճգնաժամի ընթացքում, ինչպես ցույց ե տավավիս աղյուսակը, առաջին մասում չի լնկել այլ անել ե, ըստ վորում այստեղ հազիվ թե վճռական դեր չեն կատարում ֆրանսական գաղութները²:

Ամփոփենք:

Ճգնաժամի՝ ընթացքը Ֆրանսիայում ընդհանուր առմամբ առայժմ ավելի չափավոր ե, քան թե՝ մյուս խոշոր արդյունաբերական յերկիրներում: Միքանի ճյուղեր — հյուրանոցները, տուրիստական արդյունաբերությունը, գինեգործությունը, թանգագին գործածքները — սաստիկ տուժել են ճգնաժամից, բայց, ամբողջությամբ վերցրած, ճգնաժամն այնուամենայնիվ առայժմ ավելի պակաս կործանարար ներգործություն ունի, քան թե մյուս խոշոր արդյունաբերական յերկիրներում: Ֆրանսիայում չի բացառված ճգնաժամի հետագա խորացման հնարավորությունը:

ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՅՔԸ ՀԱՄՆ-ՈՒՄ ՑԵՎ ՌՈՒԶՎԵԼՏԻ «ՄԵԾ ԵՔՍՊԵՐԻՄԵՆՏԸ»

1. Ճգնաժամի ընթացքի բնորոշ առանձնահատկությունն ՀԱՄՆ-ում այն եր, վոր պետուրյանն անընդհատ փորձում եր արհեստական միջամտության միջոցով արագորեն հաղթահարել ճգնաժամը: Այդ բոլոր փորձերը, բնականաբար, անհաջողությամբ վերջացան: Նրանք կատարյալ խառնաշփոթություն մտցրին տնտեսական քաղաքականության մեջ, վորը տիրապետում ե ՀԱՄՆ-ում 1933 թ. վերջին:

¹ Ֆրանսական ֆինանսական վիճակգրությունը քիչ բան է ցույց տալիս Պետական պարտքը ճգնաժամի ընթացքում անել ե, պաշտոնական տվյալներով, միմիայն 11 միլիարդ ֆրանկով, այն ե՝ 800 միլիոն վոսկի ռուբլով:

² Դաղութների բաժինը Ֆրանսիայի արտահանության մեջ 1929 թվին կազմում եր 180/օ իսկ 1933 թվին (8 ամիս) — 32,3% (աղբյուրը — արտաքին առևտուրի պաշտոնական վիճակգրությունը):

2. Արդյունաբերական ճգնաժամի խորությունը արդյունաբերական արտադրանքի անկման տեսակիտակ ՀԱՄՆ-ում ավելի մեծ ե, քան մյուս բոլոր խոշոր կուպիտալիստական յերկիրներում: 1929 թվի միջին 107-ից ինդեքսը տնկման ամենամեծ խորարյան հասավ (1932 թ. հուլիսին), մինչև 52,3%-ը, այսինքն՝ կեսից ավելի:

3. Ճգնաժամի խորությունն այնպես, ինչպես և Գերմանիայում, պայմանավորված ե արտադրության առանձնապես սաստիկ անկումով «Ա» բաժնում: Հիմնական կապիտալի տարրերի արտադրությունը չեր ծածկում իրական մաշումը: Ընդհակառ կապիտալի բարերի արտադրությունը չեր ծածկում իրական մաշումը: Ընդհակառ կապիտալի բարերի արտադրությունը չեր ծածկում իրական մաշումը:

4. Վարկային նգնածամբ ՀԱՄՆ-ում բոլորովին յուրահատուկ ձևեր ընդունեց: Ազատ փողերի մեծ բանակությանը ուղարկած տակարգական կապիտալի դրույթներով, կարճաժամկետ փոխառվական կապիտալի վերաբերմամբ², համընկնում եր կապիտալների ուղարկարգացման հիմք:

5. Բանկային կապիտալն Ամերիկայում փորձում եր բոլոր միջոցներով խափանել բացահայտ վարկային ճգնաժամը, այն հուսով, թե արդյունաբերական ճգնաժամն արագությամբ կանցնի: Բանկային կապիտալը ղեկավարվում եր ինքնապաշտպանության կշռադատություններով, վորովհետեւ բացահայտ վարկային ճգնաժամն անխուսափելի կղարձներ ամբողջ բանկային սիստեմի փաստական սնանկացումը: Այդ փորձը չհաջողվեց և 1933 թ. մարտին հասցրեց գրեթե բոլոր վարկային հաստատությունների անվճարունակությանը, բոլոր բանկերը փակելուն և վերջին հաշվով ինֆլյացիայի իրեն յելքիվար կային ճգնաժամից:

¹ Արտադրանքի ինդեքսը «Աննալիսակ» ավյալներով («Նորմալ» = 100):

o „Ա“ ԲԱԺԻՆ ու ՌԱԺԻՆ

	Չուզուն Պողպատ Ցեմենտ	Վունտաման Բամբակի Մետաքսի սպառաւմ	Վունտական սպառաւմ
1929 թ.	126	127	117
1932 թ.	25	29	49

² Ամերիկայի կառավարությունը կարողացավ 1932 թվին կարճաժամկետ գանձարանային մուրհակներ տարածել տարեկան 0,190/օ-ով:

Կապիտալների եմիսիան

Ամսական միջինը (միլիոն դոլարներով)	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ. (առաջին 9 ամիս- ները)
Կապիտալի նոր եմիսիան	849	585	260	99	56
Այդ թվում՝ արտասահ- մանի համար	64	85	21	2	—

6. Վարկային ճգնաժամի բացահայտ գալուստն անխուսա-
փելի դարձավ հետևյալ մոմենտների պատճերով:

Պարտաքանչությունը ծաղկման շրջանում վիրխարի չափեր ընդունեց. նրա հաշվումները տատանվում են 135 ու 150 մի-
լիորդ դոլարի միջև։ Ճգնաժամը զգալի չափով արժեքադրկեց վարկային այս շենքի հիմքերը։ Արդյունաբերական ակցիաների կուրսերն ընկան (1926 թ. = 100) 1929 թվի միջին հաշվով 189-ից մինչև 42-ը՝ 1932 թվի՝ մարտին։ Հողի գինը զյուղատնտե-
սության մեջ, վոր 1929 թվին ծանրաբեռնված եր գրեթե 10 մի-
լիորդ դոլար պարտքով¹, արժեքադրկեց ագրարային ճգնաժամի հետևանքով։ Ֆերմերները չեյին կարողանում վճարել պարտքերն ու տոկոսները։ Բազմամիլիորդ պարտքերով ծանրաբեռնված քա-
ղաքային բնակելի տների ու կառուցումների համար հատկացրած հողամասերի արժեքը՝ ճգնաժամի հետևանքով։ Բնակարանների շուկայում ընկավ մինչև չնչին մասը։ Առևտրական պարտքերը՝ գների անկման հետևանքով — 1929 թ. միջին հաշվով 137-ից (1913 թ. = 100) մինչև 86-ը 1933 թ. մարտին, — խոշոր չափով անիրական դարձան և այլն։ Մի խոսքով, վարկային ճգնաժամն անխուսափելի դարձավ, վորովհետեւ արդյունաբերական ճգնաժա-
մը, կոպիտ կերպով ասած, միջին հաշվով կիսով չափ իջեցրեց այն բոլոր շարժեքները, վորոնք հսկայական վարկային շենքի համար իրեն հիմք եյին ծառայում², Այս պարագաներում հասա-

¹ Գյուղատնտեսության ամերիկան տարեգիրք 1933 թվի, եջ 5.

² ՀԱՄՆ-ի ամրողական պարագը կրոր թիերով կազմում ե 135 միլիորդ դոլար (E. Clark, The internal Debts of the U S A, եջ 10).

գրակությունն 1933 թ. սկզբին սկսեց իր վստահությունը կորցնել դեպի բանկերն ու բանկուտները, բանկերից հանում եր իր միջոցները և բանկուտները փոխում եր վոսկու հետ։ Կրախն անխուսափելի դարձավ։

7. Դրությունն ավելի ևս վատթարացավ պետական բյուջեի դեֆիցիտով, վորը նույնիսկ այնպիսի հարուստ յերկրի համար, ինչպիսին Ամերիկան ե, վիրխարի յեւ ՀԱՄՆ-ի դեֆիցիտը բյուջե-
տային տարիներում (վոր վերջանում ե հունիսի 30-ին) կազմում եր (միլիոն դոլարներով)¹.

1933 թ.	Հնդամենը		
1931 թ.	1932 թ.	(հունիս—հոկտեմբեր)	40 ամսվա ընթացքում
903	3 153	8 069	464
			7 589

15 միլիորդ ոռոքի վոսկով 40 ամսվա ընթացքում — այս հսկայական մի գումար ե։ Խուզվելած դիմումի մեջ նախատեսվում ե 7 միլիորդ դոչլարի բյուջետային դեֆիցիտ։ (Այնուամենայնիվ պետական վարկը մինչև վերջին ժամանակներն անխախտ եր մնում։ Դեֆիցիտն հաջողվում եր ամբողջովին ծածկել շատ ցածր առկուներով գանձարանային մուլհակներ արտարկելով):

Ցերք Խուզվելած կառավարությունը 1933 թվի մարտի 4 ին իշխանության գլուխն անցավ, դրությունը հետևյալն եր։ Բանկային կատաստրոֆին ուղեկցում եր գրամական ճգնաժամի սպառնակիքը (մարդկանց ավելի ու ավելի մեծ քանակություն ուղում եր քանակնուտները վոսկով փոխել), արդյունաբերական արտադրությունն ընկել եր մինչև գրեթե ամենացած կետը։ Փերմերները վրդովված եյին զյուղատնտեսական արդյունքների գների անլուր անկումով ու մկրատի ծայրերի սաստիկ հետացու-
մով։ յերկրում 14 միլիոն գործադրուրկ կար։ Այս պայմաններում սկսվեց Խուզվելած և մեծ եսքպերիմենտը, վորը արդյունաբերական արտադրանքի՝ կապիտալիզմի պատմության մեջ չտեսնված թոփչ-
քածել բարձրացման հասցեց 54,1-ից մարտին (1928 թ. = 100)

¹ «Նեղանակ հնդկատրիալ կոնֆերենս Բորդը՝ հաշվարկումներով».
«Տայմս», 1933 թ. 28 նոյեմբերի

մինչև 90,1-ը հուլիսին, այսինքն՝ 66%-ով, վորպեսզի դրանից հետո նորից արագությամբ ցած ընկնի, թեև վոչ այնքան սուր կերպով:

Այդ վերելքի համար կարևորագույն սիջոց ծառայեց Ռուզ վելտի ծրագիրը, վոր իրեն նպատակ եր դրել գների անկումն ու նրանց աճումը ինֆլյացիայի ուղիներում վերածել 1926 թ. մակարդակին:

Վերելքի տեսական հիմք եր ծառայում այն հանգամանքը, վոր ճգնաժամն ու գների անկումը արդյունաբերական ֆարբիկատների պաշարների կամանան հասցըին մանրականառային ու մեծաքանակ սուստրի մեջ ու գործարաններում: Պատրաստի ապրանքների պաշարների ինդեքսը հետեւյալ կերպարանքն ընդունեց (1923—1925 թ. թ. = 100):

1929 թ. 1930 թ. 1931 թ. 1932 թ.

Դեկտեմբեր

119 120 108 97

Պատրաստի ապրանքների պաշարներն ընկան «նորմալ» մակարդակից «ցած»: Դրա վրա ավելացավ նաև այն, վոր ունեութավերը խոշոր չափով հետաձգեցին իրենց համար ավտոմոբիլներ, կահակարասիք գնելը, նկատի ունենալով գների անկման տեսնեցները: Այդ պատճառով ել, յերբ գների ընդհանրական բարձրացման հեռանկարներ բացվեցին, ունկոր սպառողներն ըստ պեցին բավարարել իրենց ծամանականապուածիս կրնաւած պահանջմունքը¹, մանրավանառ ու մեծախանակ տուլերականներն ըստ եցին պահեստները լցնել, ֆարբիկանատները—ծածկել իրենց հումքի ու կինաֆաքրիկատների պահանջմունքն ապագայի համար, քանի գները դեռ չեն բարձրացել: Ճգնաժամի արհեստական հաղթարարան պրոբլեմը լուծված եր թվում: 5 ամիս շարունակ Ռուզվելտն ամենաժողովրդական մարդն եր Ամերիկայում:

¹ «Մերկեյ ոֆ Կարբենտ թիզնեսս, «Բնթացիկ անտեսական տեսություն»:

² Ավտոմոբիլների արտադրությունը, վոր 1932 թվին միջին հաշվով ամսական 120 հազար համ եր, 1933 թ. նույնիսկն բարձրացավ մինչև 261 հազար համ:

Դրան նետեղ անկման դիմավոր պահանակ այն եր, վոր նիմ-նական կապիտալի նորոգումն ու բնդպայնումը տեղից չըարժինց, «Ա» բաժինը չեր ոգնում արտադրության նետագու անմանը: (Չու-գունի ու պողպատի սաստիկ ավելացած արտադրանքը գործած-վեց սպառման միջոցների արտադրության վրա— ավտոմոբիլներ, ուժիթերատորներ, ալկոհոլի արդյունաբերություն և պահեստ-ները): Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի աղեցությունն արգելք եր հանդիսանում առաջին յենթաքածնի հետագա աճ-մանը: Այս բանն առանձնապես պայծառ կերպով լուսաբանում են ՀԱՄՆ-ի խոշորագույն բուրժուական լրագրի՝ «Եյու-Յորկ Տայմս» ոգոստումի 13-ի հետևյալ տողերը:

«Մակայն լրացուցիչ սարքավորում դնելը՝ արտադրանքը պահպանելու կամ ավելացնելու նպատակով՝ ավելի կարճ ժամա-նակամիջոցում, ուրիշ կատեգորիայի յե վերաբերում: Այդ նշա-նակում ե՝ արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի արտադրա-կան կարողության արդեն առանց այն ել մեծ առատության ավելացում և խորացնում ե հիմքը պոտենցիալ գերարտադրու-թյան համար:

Ցեթե ձեռնարկությունները մրցության մեջ մտնեն իբենց արտադրական ունակությունն ավելացնելու համար, ապա զրա հետեանքը ելինի գերարտադրություն և շուկաների բա-րոյալքում: Ընդհանուր առմամբ՝ գերհոր արտադրական ունա-կության ստեղծումը ներկայում, ըստ յերեւութին, անխոհեմ քայլ ե հանդիսանում, Արտադրության համար մեքենաների գումը ֆինանսավորող բանկիները պետք ել վորոշեն, թե նրանք արդյոք կհամաձայնեն անհրաժեշտ փոխարինումը կատարել, թե կհամաձայնեն միմիշայն ձեռնարկության արտադրական ունակու-թյունն ավելացնելուն»:

Մուզվելուի կառավարությունը ամեն բան փորձեց, վոր-պեսզի ինվեստիցիաները շարժման մեջ դնի: Նա բանկերի զգին եր փաթաթում կառավարական կապիտալները, վորպեսզի նրանց հարկադրի՝ «լիբերալ» վարկային քաղաքականություն վարելու: Նա 3 300 միլիոն դոլար հատկացումներ անել տվեց պետական ներդրումների համար և ալիս: Այս բոլորին անհաջողություն կրեց

գլխավոր չարիքի—արտադրական կարողության չափազանց մեծության —պատճառով: Ինչպես մենք վերևում ցույց տվինք, կապիտալիստների ռուկան մեռած մնաց: Եինարարական գործությունների սկսեց նվազագույն չափով աշխատանալ միմիայն աշնանը: Յերկաթուղիները պատվերներ չեյին տալիս: Այս պայմաններում վերելքը պետք է արգելակվեր և նոր անկում պետք է տեղի ունենար, հենց վոր կասեցված պահանջմունքը բավարարվեց և պահեստները լցվեցին: 1933 թվի ոգոստոսին արդեն պատրաստի ապրանքների պաշարների ինդեքսը նորից բարձրացավ մինչև 108 (նվազագույնը—95—1933 թ. ապրիլին):

Դրա վրա ավելանում են նաև այլ կարեր մոմենտներ:

Ուղղվելուն իրեն նպատակ դրեց վոչ միայն ընդհանրապես գները բարձրացնել մինչև 1926 թ. մակարդակը, այլև սեղմել մկրատը, վորպեսզի լիկվիդացիայի յենթարկվի խմորումը ֆերմերների շրջանում²:

¹ Եինարարական գործունեյության ինդեքսը «Ֆեռներալ Ռեզերվ Բյուջեանից առվալներով».

	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.
Ոգոստոս	81	59	30	23
Հունվար-ոգոստոս	—	60	28	18
Սեպտեմբեր	—	—	—	30

² Ֆերմերների դժգոհությունը դասակարգայնորեն-վտանգավոր ե բուրժուազի համար և բացի դրանից՝ կուսակցական-քաղաքական տեսակետից ել կարելող նշանակություն ունի Սենատում, վոր վճռական քաղաքական հիմնարկությունն ե, յուրաքանչյուր նահանգ ներկայացված ե յերկու սենատորներով: Այդ պատճառով՝ քակավ բնակչություն ունեցող ֆերմերական նահանգների սենատորներն ավելի բազմաթիվ են, քան այդ համապատասխանում և նրանց ներկայացրած նահանգների բնակչության թվին կամ տնտեսական կշռին Ստորին պալատում ներկայացուցչության նորման պրոպորցիոնալ ե բնակիչների թվին: Որինակ:

	Նյու-Յորկ Պենսիլվանիա Արիզոնա Նեվադա Դելավար Ներկայացուցչություն			
սենատում	2	2	2	2
Ներկայացուցչություն ստորին պալատում	43	36	1	1

Սակայ բնակված ֆերմերական նահանգների ներկայացուցչությունը սենատում համարյա 43 անգամ ավելի յե, քան կլիներ պրոպորցիոնալ ներ-

Մինչև «եքսպերիմենտի» սկիզբը 1933 թ. փետրվարին՝ գների դրությունը հետևյալն եր:

Ա. շիատանի դեպարտամենտի ինդեքսը (1926 թ.=100)

Մեծածախ գները

Հնդկանուր ինդեքսը	Մատեսու- թյան ար- դյունքները	Մյուս բոլոր ապրանքները	Գների մկրատը
59,8	40,9	66	61%

Ուղղվելուն ամենավտանգավոր միջոցառումներ եր ձեռնարկում, վորպեսզի սեղմի գների մկրատը. նա 30 տոկոսանոց հարկ մտցրեց ալյուրի ու բամբակի մանվածքի վրա, վորից ստացված յեկամուտը ֆերմերներին պիտի հասնի, բայց միմիայն այն գեպքում, յեթե նրանք կրնատեն հացահատիկի ու բամբակի ցանքի տարածությունը: Գնվեց ու վոչնչացվեց 6 միլիոն խոզ՝ գները բարձրացնելու համար և այն: Բայց հետևանքը բոլորվին անբավարար դուրս յեկավ: Վեց ամիս անց, 1933 թվի ոգոստոսին, գների դրությունը հետևյալն եր:

Հնդկանուր ինդեքսը	Մատեսու- թյան ար- դյունքները	Մյուս բոլոր ապրանքները	Գների մկրատը
69,5	57,6	74,1	28%

Մենք տեսնում ենք, վոր դեռ հեռու յե մինչև 1926 թ. գների մակարդակն ու գների մկրատի լիկվիդացիան:

Այս պարագաներում Ուղղվելուն միմիայն մի յելք եր մուռ—արտացանել դոլլարի արժեզրկումը, վորպեսզի գների անումն առաջ տանի:

Կայացուցչության դեպքում: Ինարկե, խոշոր բուրժուազիան, այնուամենայնիվ, տիրապետող դասակարգ ե մուռ. բայց կուսակցական-քաղաքական մանյությունների բնույթը վորոշում ե ներկայացուցչության այս սիստեմավ սենատում

Սակայն ՀԱՄՆ-ի դրության յուրահատկությունն այն երգու ՀԱՄՆ-ի միջազգային դիրքերը դժվարացնում են դոլլարի արժեգրկումը։ Առևտական հաւելվելիուն ակտիվ է։ Ընթացիկ վնարային հաւելվելիուն ակտիվ է։ Կարճաժամկետ արտասահմանյան կապիտալը, վորի հեռանալը կարող եր դոլլարի կուրսն իջեցնել, շատ քիչ ե տեղափորված յերկում։ Բոլոր առտաքին գործները դոլլարի արժեգրկման դեմ են գործում։ ՀԱՄՆ-ի երաժարումը վասկու ստանդարտից վորկու հետ կապված կոռադատուրյուններից չեր հարկադրաբար բղխում, ինչպես այդ յեղագ ձապոնիայում կամ Անգլիայում։ (Վորկու հակայական պաշարները, 4 միլիարդ դոլլարից ավելի, վոչ մի կերպով չոգտագործվեցին դոլլարի կուրսը պահպանելու համար):

Հետագա արժեգրկումն իրականացնելու համար հարմարավոր միջոց կլիներ ապահովություն չունեցող թղթադրամի արտարկումը՝ բյուջեային գեֆիցիտը ծածկելու համար։ (Ոուզիլտը սենատից լիազորություն ստացավ լրացուցիչ Յ միլիարդ դոլլար թղթադրամ արտարկելու ու դոլլարը մինչև 50% արժեգրկելու)։ Ոուզիլտը մինչև այժմ վախենում եր այդ բացահայտա ինֆլյացիայից և կապիտալիզմի պատմության մեջ բոլորովին նոր միուղի ընտրեց, այն ե վոսկու գնումն ավելի բարձր գներով, քան այդ համապատասխանում ե դոլլարի կուրսին վոսկի ֆրանկներով ներկա մոմենտում, այսինքն՝ ընտրեց դոլլարի կուրսն արհեստականորեն իջեցնելու ուղին։ Այդ պըոցեսը շարունակվում ե կիպ մինչև 1933 թ. վերջը։

Մինչ այս բարձրանում ե բուրժուազիայի վճռական ազդեցություն ունեցող շերտերի ավելի ու ավելի ուժգին ոպսզիցիան հետագա ինֆլյացիայի դեմ։ «Միջազգային» բանկիները Սորգանի գլխավորությամբ, ֆեդերալ ռեզերվի սխտեմի ղեկավարները, առետրական պալատները, ֆինանսական կապիտալի խոշորագույն որդանները — Շուռու Ստրիտ Ֆենսար, Շնննալիստն, «Ֆինանշին շին կոմմերշին կրոնիկ» — ավելի ու ավելի վճռականորեն հանդես են գալիս հետագա ինֆլյացիայի դեմ և պահանջում են դոլլարի կայունացումը, վորպեսզի վերջ դրվի ռամկանությանը ու ենթայերիմնեն։ Ցորդը դեռ մոնուրատիվ կերպով հրաժարվեց «կողն» ստորագրելուց։ Ընտրու-

թյունների ժամանակ ջարդված հանրապետական կուսակցությունը, վորը մինչև վերջին ժամանակներս չեր քննադատում Ռուզվելտի քաղաքականությունը, հիմա մի խիստ սուր մասսայական բրդյուրը և հրաժարակել Ռուզվելտի դեմ Ռազզիցիան թափանցել ե նույնիսկ դեմոկրատական կուսակցության ներար։ Ա. Սմիտը, հայիսագահության հայտնի դեմոկրատական թեկնածուն սախորդ ընտրությունների ժամանակ, կտրուկ կերպով հանդես ե վալիս Ռուզվելտի ինֆլյացիայի քաղաքականության դեմ։ Ռուզվելտի աշխատակիցները — Մոլեր, Սպլեյքը, Փինանսների մինիստը վուզինը և ուրիշները դեմոնստրատիվ կերպով հրաժարվում են պաշտոններից։ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան նույնպես վայումացում ե պահանջում։ «Վոսկու բլոկն» ու Անգլիան ելնույն բանն են պնդում։ Միմիայն բուրժուազիայի պարտքերով աստիկ ծանրաբեռնված շերտերն ու պահանջում են շարունակել ինֆլյացիան։

Ռուզվելտն ակներկորեն կղիջի խոշոր բուրժուազիայի ճշնշամն առաջ և դոլլարը կայունացնի 40—50% կորցնելով կուրսից։ Արժեգրկման այս աստիճանը քավական կլինի, վորպեսզի պարտքերի բեռը տանելի դարձնի խոշոր բուրժուազիայի համար։ Փերմերների կործանումը շարունակվելու յեր:

Ռուզվելտի մեծ եքսպերիմենտի հանրագումարները տալով մենք կարող ենք հետեւյան ասել. դոլլարի 40—50%-ով արժեգրը կումը համապատասխան փոփոխություն առաջ բերեց յեկամտի բաշխման մեջ հոգուտ արդյունաբերական կապիտալի և ի հաշիվ փոխառվական կապիտալի (ռանտյեների դասակարգի)։ Ռուշի խոսքերով՝ այն, ինչ վօր տեղի յեր ունենալու տարերանորեն, մասսայական սենատիւրյունների ու վարկային սիստեմի խորտակման ձեւը, իրագործվեց ինֆլյացիայի միջոցով ավելի համաշափ, ավելի սահուն կերպով։

Արդյունաբերական արտադրության ամառնային վերելքը միմիայն տեսնդային կերպով արագացրեց այն պրոցեսների գարգացումը, վորոնք առանց ինֆլյացիայի կողմից զարկ ստանալու յել զարգանալու եյին — զարգանալու եյին ավելի դանդաղ, բայց ավելի առողջ ձևով։ Դրանով և բացարկվում արդյունաբերական արտադրության սուր անկումը 1933 թվի վեր-

Հին արդյունաբերական արտադրությունը գտնվում եր, խստորեն ասած, հենց այն մակարդակի վրա, վորին նո կհասներ նաև առանց Ռուզվելտի եքսպերիմենտի, ճիշտ այնպես, ինչպես այդ յեղավ ուրիշ յերկիրներում ել, ել ավելի ցած մակարդակի ժամանակ:

Ներքեւ բերված աղյուսակը, վոր առնված ե «National City Bank»-ի հոկտեմբերի համարից, ակնրախ ու կոնկրետ կերպով ցույց ե տալիս, թե ինչպիսի ավերածություններ գործեց տընտեսական ճգնաժամը ՀԱՄՆ-ում:

Սպառման միջոցների յեվ արտադրության միջոցների շարժումը 1932 թ. ՀԱՄՆ-ում համեմատած 1929 թ. հետ-

Սպառման միջոցներ	Տոկոսային փոփոխություն	Արտադրության միջոցներ	Տոկոսային փոփոխություն
Վոչխարների ու մաքիների մորթումը . . .	+ 17,3	Ցեմենտի առաքումը . . .	- 52,6
Պանրի սպառումը . . .	+ 15,5	Ներկերի ու լաքերի վաճառումը (գոլարներով) . . .	- 53,0
Թելի ներմուծումը ՀԱՄՆ . . .	+ 6,0	Մծմբաթթվի արտադրությունը . . .	- 57,9
Սուրճի ներմուծումը ՀԱՄՆ	+ 1,2	Կապարի առաքումը . . .	- 59,5
Նյու-Յորկ կաթ բերելը . . .	0,0	Փայտի ամուր տեսակների առաքումները . . .	- 61,7
Բենզինի սպառումը . . .	- 0,2	Ապակու արտադրությունը շինարարությունը . . .	- 62,2
Կակոյի ներմուծումը ՀԱՄՆ . . .	- 5,4	Զրմուղային ու կանակի զաղին սարքավորման առաքումները . . .	- 64,5
Մատագած թռչունների քանակը 5 կարեցրագույն շուկաներում . . .	- 6,1	Շոգեջեռուցման ռադիատորների առաքումը . . .	- 64,
Ծխախոտի առաքումն պահեստներից . . .	- 6,5	Դուգա սոճու առաքումը . . .	- 65,8
Ցորենի այսուլի սպառումը . . .	- 7,8	Բենզինա ավտոմոբիլների առաքումը . . .	- 69,5
Բրնձի ստացումը բընձարան-ներում . . .	- 8,0	Բենզինա ավտոմոբիլների առաքումը . . .	- 64,3
Ցուղի սպառումը . . .	- 8,8	Բարձրակարգ առաքումը . . .	- 72,8

Սպառման միջոցներ	Տոկոսային փոփոխություն	Արտադրության միջոցներ	Տոկոսային փոփոխություն
Հում մետաքսի ստացումը գործարաններում	- 10,6	Պոմպերի առաքումները (գոլարներով)	- 72,8
Ջվերի ստացումը ծառկաներում	- 12,3	Պողպատի առաքումները շինարարության համար	- 73,8
Ցեղաների ու հորթերի մորթումը	- 12,8	Պողպատե հեծանների առաքումները	- 74,4
Գլանակների առաքումը պահեստներից	- 13,0	Չուլմանն ասաքումը (պատղերներ)	- 75,9
Վունամանի արտա- գրություն . . .	- 13,2	Ելեկտրաշարժիչների առաքումները (գոլարներով)	- 76,0
Խոզերի մորթումը	- 14,7	Դարնջի լիմոնի բեռնումը յերկաթուղիներում	- 80,7
Նարնջի ու լիմոնի բեռնումը յերկաթուղիներում	- 15,5	Պողպատե կաթսանների պատղերները	- 81,0
Ձկան ստացումը կարե- վորագույն նաև համանգիստներում	- 19,2	Ցեղական ապաւումը յերկաթուղիներում	- 83,9
Խնձորի յերկաթուղային բեռնումները	- 20,8	Աղյուսի արտադրությունը	- 85,0
Կարտոֆիլի յերկաթուղային բեռնումները	- 22,5	Պողպատե ու լուսական ապաւումը (գոլարներով)	- 85,2
Շաքարի գտումը 8 նավահանգիստներում	- 23,0	Հասարակական նշանակություն ունեցող շինարարությունը (գոլարներով)	- 85,6
Սոխի յերկաթուղային բեռնումները	- 24,6	Լրագրական թղթի սպառումը . . .	- 86,7
Լրագրական թղթի սպառումը . . .	- 35,7	Հաստոցների առաքումները	- 86,8
Հում բամբակի սպառումը . . .	- 28,8	Առևտրական շենքների կառուցումը (գոլարներով)	- 87,0
Սիրաների առաքումը պահեստներից	- 32,2	Հում բրդի սպառումը . . .	- 87,1
Հում բրդի սպառումը . . .	- 34,2	Պողպատե ձողերի արտադրությունը	- 92,1
Անորացիսի առաքումը . . .	- 34,7	Ելեկտրական գաւառանների պատղերները	- 95,4
Կանֆետի գանառը գործարաններից	- 39,9	Ֆարբրիկաների ու գործարանների շինարարությունը (գոլարներով)	- 72,8
Դողերի առաքումը . . .	- 40,5	Տնային կահ-կարասիքի առաքումը . . .	- 73,8
Տնային կահ-կարասիքի առաքումը . . .	- 64,0	Տնային գոշեծուծ գործիքների պատղերները . . .	- 74,4
Տնային գոշեծուծ գործիքների պատղերները . . .	- 64,3		

Սպառման միջոցներ	Տոկոսային փոխություն	Արտադրության միջոցներ	Տոկոսային փոխություն
Մարդասար ավտոմոբիլների արտադրությունը	- 75,2	Ելեկտրական կարապիկների առաքումները (գույքաներով)	- 93,9
Հինգած առևտորական նավերի թիվը	+ 32,5	Ցերկաթուղային ապրանքագոնների կառուցումը	- 99,3
Նավթահորերի փորումը Կտուրի կոմինտրների առաքումը	- 32,5		
Տնտեսական նշանակություն ունեցող ձեռնարկությունների կառուցումը (գույքաներով)	- 42,8		
	- 45,0		

Ինչ վերաբերում ե սպառմանը, ապա այստեղ մենք տեսանում ենք սպառման բոլոր բարձրորակ միջոցների անկումն—թուչնի, խոզի ու տավարի մսից անցումն դեպի վաշխարի մսի գործածությունը, պանրի գործածության աճումը յուղի փոխարեն:

Մրանք են ընդհանուր թվերն ամերիկյան ամբողջ բնակչության համար. պրուետարիատի սպառումն, ինարկե, ել ավելի շատ ե կրծատվել: Ինչ վերաբերում ե արտադրության միջոցներին, ապա թվերն իրենք պերճախոս են:

ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ճգնաժամը ճապոնիայում ընթանում է մյուս կապիտալիստական պետություններից տարրեր ձևերով. ճգնաժամի պատկերի վրա արժատական ներգործություն ունեցան վաղ ինֆլյացիան, պատերազմը Մանջուրիայում և պատերազմի տենդային նախապատրաստումը:

Ճապոնիային ամբողջությամբ ու լիովին վերաբերում ե ռազմական կանոնադրությունը կանոնադրությունը:

1. Արդյունաբերական արտադրության ամենացած մակարդակը ձապոնիայում վրա հասավ արդեն 1931 թվին:

Արդյունաբերական արտադրության ինդեքսը (1928 թ.=100)¹

1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ. (առաջին 8 ամիսները)
111,4	105,6	100,7	107,9	124,5

2. Խոշոր արդյունաբերական յերկիրներից ճապոնիան առաջինն եր, վոր արդեն 1931 թվին սիփաված յեղավ հրաժարվելու վուկու ստանդարտից ու ինֆլյացիայի դիմելու:

Յենի արժեգրկումը կազմում եր տոկոսներով դեկտեմբերին

1931 թ.	1932 թ.	1933 թ. (10 նոյեմբերի)
12,8	58,4	61,8

3. Ներքին գների մակարդակի բարձրացումը ճապոնիայում տեղի ունեցավ մեծ ուշացումով յենի արժեգրկման համեմատությամբ:

Մեծածախ գների ինդեքսը (1928 թ.=100) կազմում եր դեկտեմբերին.

1931 թ.	1932 թ.	1933 թ. (սեպտեմբեր)
114,7	139,5	137,8

4. Ներքին գների այս հարաբերական կայունացումը յենաներով՝ նշանակում ե գների հակայական իջեցումն վոսկով. այդ բանն հնարավորություն տվեց ճապոնական կապիտալիստներին աշխարհն ապրանքներով հեղեղելու, հաղթելով բոլոր մրցակիցներին: Ճապոնական ապրանքների, հատկապես տեքստիլ ապահովագումը:

1 Բոլոր տվյալները վերցրած են Ազգերի լիգայի հրաժարակություններից:

բանքների, եժանությունը, նրանց վորակի վատության հետ
մեկտեղ, համապատասխանում եր գաղութային գյուղացիական
մասաների ընկած գնողունակությանն Ասիայում, Աֆրիկայում
և Հարավային Ամերիկայում:

Ճապոնիայի արտահանումը

(ամսական միջինը)¹

	1929թ.	1930թ.	1931թ.	1932թ.	1933 թ. (առաջին 10 ամիս- ները) ²
Միլիոն յենաներով	175	119	93	113	150
Միլիոն վոսկի դրամներով	81	59	46	30	30 (առաջին 9 ամիսները)
Տոկոսներով՝ համաշխարհային արտա- հանության վերաբերմամբ . . .	2,96	2,67	2,89	3,05	3,37

Թեև ճապոնիայի արտահանությունը 1930 թվից սկսած՝
վոսկով արտահայտելով՝ կիսով չափ ընկավ, բայց նրա հարա-
բերական կշիռը արտահանության ընդհանուր անկման պարա-
գաներում հաջողվեց գրեթե մեկ քառորդով բարձրացնել: Սրանով
են բացարձում ամեն կողմից թափող գանգատները ճապոնա-
կան տեքստիլ ապրանքների ու սպառման այլ առարկաների
սպանիչ մրցակցության մասին ամբողջ աշխարհում և գլխավո-
րապես Անգլիայի աճող հակահարվածն Հնդկաստանում ու մյուս
գաղութներում, վոր սպառման և առևտրական պատերազմի փո-
խարկվել, չնայած նրանց քաղաքական բարեկամությանը:

5. Ինքը ացիոն արտահանության հետ մեկտեղ՝ պատերազմն
ու պատերազմի նախապատրաստությունը նույնպես գլխավոր
աղբյուր ծառայեցին արդյունաբերական արտադրությունը ճա-
պոնիայում բարձրացնելու համար: Ճապոնական վիճակագրու-

թյունը հնարավորություն չի տալիս հետամտելու այս բանին իր-
մանրամասնություններով: Բյուջեյի մեջ բացահայտ կերպով՝ ցույց
տրված պատերազմական ծախքերն աճել են 1929 թվի 495 մլ-
լիոն յենից մինչև 988 միլիոն յենը 1934 թվին, բյուջեյի 28,5%-ից
մինչև 42,5%-ը: Բայց պարզ է, վոր սպառազինման համար կա-
տարվող գաղտնի ծախքերը խիստ մեծ են և վոր միջոցների բա-
վական խոշոր մաս զուրս ե քաշվում Մանջուրիայից:

6. Արտահանման ընդլայնումը և հսկայական սպառազի-
նումները գնվեցին ներքին ռուկայի տարածության չտփազանց կրնա-
ման գնով: Դյուղացիության յեկամուտը շատ սաստիկ ընկավ
բրնձի ու մետաքսի գների անկման պատճառով, ապրանքներ,
վորոնք արժեզրկված վայրուտայով ավելի քիչ արժեն, քան նրանք
արժեյին միքանի տարի առաջ լիարժեք յենաներով: Բանվոր դասա-
կարգի յեկամուտն ընկավ ել ավելի, վորովհետև աշխատավարձն
արժեղորկված յենով ավելի ցած է, քան թի այն միքանի տարի առաջ
եր լիարժեք յենով: Ճապոնական տնտեսության կարծեցյալ լավ
դրությունը հիմնված է սուր լարման վրա ինչպես տնտեսական,
այնպես նաև սոցիալական իմաստով:

¹ Ազգերի լիգայի բյուլետենը:

նոռնական վիճակագրական տվյալները և միքանի որինակներուն
ցույց տալ նրանց կեղծումը

Լրիվ գործազուրկ արդյունաբերական բանվորների
տոկոսը

(միջին հաշվով տարեկան)

	1929թ.	1930թ.	1931թ.	1932թ.	1933 թ.
Գերմանիա (արհմիությունները)	13,2	22,2	34,3	43,8	44,7 ¹
Ավստրիա (նպաստ ստացողները) :	—	—	20,3	24,8	26,8 (առաջին 8-րդ ամիսները)
Բելգիա (նպաստ ստացողները)	1,3	3,6	10,9	19,0	17,4 »
Կանադա (նպաստ ստացողները)	5,7	11,1	16,8	22,0	23,3 »
Դանիա (նպաստ ստացողները)	15,5	13,7	17,9	31,7	29,0 »
ՀԱՄՆ (արհմիությունները) ²	12,0	21,0	26,0	32,0	25,0 »
Նորվեգիա	15,4	16,6	22,3	30,8	33,2 »
Հոլլանդիա	7,5	9,7	18,2	29,9	30,5 »
Անգլիա	8,2	11,8	16,7	17,6	16,5 »

Այս թվերը չափազանց անվտանելի յեն. զանազն լերկիրների մասին յեղոծ տվյալներն անհամեմատելի յեն միմյանց հետ։ Զնայած դրան՝ նրանք ցույց են տալիս հետեւյալը. 1) գործազուրկների տոկոսը տարեցտարի ավելանում եր. 2) արտադրամի աճնումն 1933 թվին լիակատար գործազրկությանը բերեացում չըերեց (գործազրկության լրիվ միջին տոկոսը տարվա ընթացքում, իհարկե, բոլոր յերկիրներում ավելի բարձր ե, քան վերև մեջ բերված միջին տվյալներն առաջին 8—10 ամիսների համար. այս հետեանք և սեպտեմբերին պատճառների ու կոնյունկտուրայի վատթարացման։

¹ Գերմանիայի «Ազատ արհմիությունների» վերջին թվերը մայիսի համար։

² Արհմիություններն ընդգրկում են միմիայն բարձրուսակ արդյունաբերական բանվորների առանձին խավերը. բոլոր գործազրկությունների տոկոսն անպայման ավելի բարձր եւ

ԶՈՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ
ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Պրոլետարիատի դրության մասին հավաստի տվյալներ շկան. Բուրժուական վիճակագրությունը բանվորների դրությունը սիստեմատիկորեն ավելի նպաստավոր ե նկարագրում, քան թե այն ե իրականության մեջ։ Միքանի դեպքերում կարելի յե ապացուցել կեղծիքը՝ հենց բուրժուական վիճակագրության հիման վրա։ Բայց այդ բանն հաճախ բարդ հաշվարկումներ ե պահանջում։ Սակայն բանվոր դասակարգի դրության վատթարացումը միանգումայն ակներեն ե նաև բուրժուական վիճակագրության հիման վրա, չնայելով նրա բոլոր գեղազարդումներին։

Վատթարացումն հետեւյալ հիմնական գծերով ե ընթանում. ա) գործազրկների թվի ավելացում (ինչպես և մասնակիորեն գործազրուրկների). բ) լրիվ աշխատող բանվորների իրական աշխատավարձի իջեցում. գ) աշխատանքի իմտենսիվության բարձրացում. դ) սոցիալական ապահովագրության կրճատում։

ՄԱՍՍԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԻ
ԺԱՄՄԱՆԱԿ

Հավաստի վիճակագրություն ամբողջ աշխարհի գործազրկության մասին գոյություն չունի. Վոչ մի տեղ հաշվի չի առնըվում գուղատնտեսական բանվորների ու կիսապրոլետարների գործազրկությունը. Մենք կարող ենք մեջ բերել միմիայն պաշ-

Այն փաստը, վոր արդյունաբերական արտադրության զգացքի աճումն 1923 թվին՝ գործադրկության թեթևացում չբերեց, այնքան անհավատալի յե թվում, վոր մենք անհրաժեշտ ենք համարում այն ուրիշ վիճակադրական տվյալներով ել հաստատել:

Ամերիկան գործարանային արդյունաբերության
պատճենական վիճակագրությունը

(1923—1925 թ. թ. = 100)¹

Գործարանային արդյունաբերության արտադրության բանքը (բնական ձև)	Զբաղված բանական գործների թիվը	Տրված աշխատավարձի գումարը
Մայիս 1932 թ. . . .	61	46
» 1933 թ. . . .	80	42

Արտադրանի մոտ 32 %-ով ավելացումը մի տարվա ընթացքում ձեռք է բերվել բանվորների թիվը պահանջնելու և աշխատավարձի գումարը 10 %-ով իջեցնելու պարագաներում: Հետեւյալ ամիսներին փոխհարաբերությունը մի փոքր լավացավ աշխատավարձանակի կրածատման կապակցությամբ՝ Ռուզվելտի «կողեքսի» համաձայն, և աշխատավարձի բարձրացման կապակցությամբ, վոր առաջ յեկավ դոլարի արժեղության հետևանքով:

Նման զարգացում կարելի յե հաստատել նաև գերմանական պաշտոնական տվյալներով:

Աշխատողների թիվը (միլիոններով)	Արդյունաբերա- կան արտադրան- քի ինդեքսը	Որական աշխա- տամերի մի- ջանաբերու- թյան մեջ
Ոգոստոս 1932 թ. . . .	12,76	58,5
» 1933 թ. . . .	13,72	71,6
Ճուն.	0,96	13,1
Ճուն. տոկոսներով	7,5	22,4
		—

¹ «Ֆեդերալ. Բեղերգ. բյուլետեն», 1933 թ. հոկտեմբեր, հջ 629:

Այսպիսով մենք տեսնում ենք արտադրանի հակայական ավելացում: Այն հետեւանք և նաև ձգնաժամի ժամանակ հետևողականորեն կիրառված ռացիոնալացման: Բայց այդ ռացիոնալացումը հատուկ բնույթ ուներ, վար վորությում եր ըուկայի սեղմուրյամբ: Կապիտալը վորոշ չափով հարմարեց արտադրական ապարատի կարողության չափաղանց սոհմանափակ ոգտագործմանը և ռացիոնալացումը կիրառեց առանց արտադրական կարողությունը բարձրացնելու: Այլ կերպ ասած՝ արտադրանքի ավելացումը ձեռք եր բերվում առենից առաջ վնչ թե աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոցով, վհչ թե տեխնիկական խոռոք նորմուծությունների միջոցով (վորոնց հետևանքը համարյա միշտ լինում եւ արտադրական կարողության բարձրացումը), այլ զիսավորապես աշխատանիքի ինտենսիվուրյունը բարձրացնելու միջոցով: Հակայական մասսայական գործադրկությունը բանվորներին ավելի դիջոր եւ գարձնում կտապիտալի պահանջների վերաբերմամբ: Այն հանգամանքը, վոր բանվորները լրիմ շաբաթ չեն աշխատում, հնարավորություն և տալիս ավելի կարճ ժամանակվա ընթացքում ավելի ուժգին կերպով աշխատանքային հներգիւմ արտածել (վոր չի բացառում արտաժամյա աշխատանք):

Միքանի դեպքերում կարելի յե անմիջականորեն թվերի հիման վրա ապացուցել արտադրանքի ավելացումը: Այդ առթիվ շատ գեպքերում գործարաններում ոգտագործվում ե միմիայն ամենից ավելի նոր սարքավորումը: Այլ գեպքերում կտապիտալը վերադառնում և ավելի նախնական տեխնիկայի:

Ուսուրում քարածիսի արդյունահանումը մի հերթին ու մի բանվորին կազմում երև.

Տարիներ	Գետնի տակ աշխա- տամերը	Բոլոր բան- քիլացում 0%-ով
1929	1 558	1 271
1930	1 678	1 352
1931	1 891	1 490
1932	2 093	1 628
1933 (1 հունիսի)	2 177	1 684
Ավելացում 0%-ով	40	33

¹ «Գլուկառով»—հանքարդյունաբերության որդան, 1931—1933 թ. թ.

Ամբողջ գերմանական արդյունաբերության համար կոնյունկտուր-ինստիտուտը տալիս է արտադրանքի հետևյալ բարձրացումը՝ մի ժամում մի բանվորի հաշվով¹:

1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
100	106,6	115,6	121	124,4

Ճապոնիայում արտադրանքի զգալի աճումը մի բանվորի հաշվով ցույց է տրված հետևյալ տվյալներով, վորոնք վերաբերում են բամբակամանական արդյունաբերությանը²:

Արտադրված ե ամսական հական մանվածք 1 բանվորին	Զբաղված բանվորների թիվը ամեն 1000 ինքնական
--	--

1927	1,23	35,3
1929	1,46	27,5
1930	1,51	23,5
1931	1,75	20,6
1932	1,95	20,1

Նույն աղբյուրում մենք հանդիպում ենք տվյալների բանվորների թվի մասին ամեն մի հազար ջուլիակային դադայահին-

Տղամարդ	Կին	Ընդամենը
1927	132	660
1929	122	494
1930	113	430
1931	90	357
1932	79	368

Ճգնաժամի տարիները կիրառած ռացիոնալացման հաջողությունները լիովին յերկան յեկան 1933 թվին, յերբ արտադրության դգալի բարձրացում ձեռք բերվեց, առանց ավելացնելու

¹ «Վախենբերիիտ», 1933 թ. ոգոստոսի 5-ին, եջ 68.

² Ճապոնական բամբակագործ. կարտելի պաշտոնական տվյալներով³ «Զեպեն Աղվերտայզերֆ-ի առաջին հավելված, 1932—1933 թ., եջ 58»:

կամ համեմատաբար քիչ չափով ավելացնելով զբաղված բանվորների թիվը:

Մեր կարծիքով՝ այս դրությունը բացառիկ մեծ դասակարգային նշանակությունների 1932 թ. հաշվետվությունները շարունակ մի և նույն միացն են կրկնում. «Մեզ հաջողվեց այնպես սասիկի իշեցնել ինքնարձեմբ, վոր արտադրանքի անեւան բարձրացումը, արտադրական կարգության 50 %-ով ոգտագործումը՝ ձեռնարկությանը նորից տանը արարեց՝ կդարձնի»: Այս բանն իսկապես տեղի ունեցավ 1933 թվին բազմաթիվ խոշոր ձեռնարկություններում: Այդ նշանակում ե, թե կապիտալ՝ «Յուրիմայ» տանը յաջուածու տանսերն զգալի չափով լավացել են նգնածամի ժամանակ կատարված ուղղությացման ու աշխատավարձի իշեցման հետևանքով՝ պահպանելով մասսական գործագրելությունը:

Կապիտալի ինքնանեցման ուժեղացումը, յերբ մասսայական գործագրելությունը գրեթե անփոփոխ դրույան մեջ և մեռում և իրական աշխատավարձն իշեցվում ե—ահա նգնածամի ժամանակ կիրառված ուղղությացման հետևանքում կապիտալի հարմարվելու հետևանքը: Այս նշանակում ե, թե կրիզիսի ժամանակ վիթխարի չափերով աճած մասսայական գործագրելությունն ընդիմանուր առմամբ և տմբողջովին վեցցած կապահանգվի մինչև այն ժամանակ, բանի դեռ կապիտալիստական սիստեմը գոյություն կունենա:

Վերցնենք կրկին ՀԱՄՆ-ի որինակը: 1933 թ. հուլիսին արդյունաբերական արտադրանքը (սեղոնայնության վերաբերյալ ուղղումով) հասավ 100 ինդեքսին, այսինքն՝ 1923—1925 թ. թ.

¹ Ֆալիս ենք միքանի սրբնակներ.

Համաշխարհային ձեռնարկությունների տանը յարձակությունը (միլիոն դոլարներով)

1932 թ.	1933 թ.
«Զեներալ Մոտորս»	+ 5,9
«Բնակենացիոնալ աելեկտրաֆ»	+ 93,0 (9 ամիս)
(II յեռամսյակ)	- 0,9
«Դյուպոն» (III յեռամսյակ)	+ 5,5
	+ 0,2
	+ 11,9

միջին մակարդակին: Բայց 14 միլիոն գործազուրկներից, Զոնսոնի ամենապատիմալ գնահատությամբ, աշխատանք ստացան 4 միլիոն, «Աշխատանքի ամերիկյան ֆեղերացիայի» գնահատությամբ՝ 3,6 միլիոն, հասարակական ոգնության աղմինիստրատոր Հոպկինսի գնահատությամբ՝ 1,6 միլիոն: Այդպիսով՝ ամենալավատես գնահատությամբ մնացին 10 միլիոն գործազուրկ:

Անգլիա: Պահպանողական պատգամավոր Մակ Միլլանը, վոր մեծ հեղինակություն եւ այս բնագավառում, հայտարարեց պառամենտում: «Ճշմարտությունն այն եր, վոր, թեև կարճաժամկետ ճգնաժամը վերացվեց, բայց յիրկարաժամկետ ճգնաժամը, հիմնական ճգնաժամը, մնաց: 700 հազար մարդու աշխատանքի ու դարձիլը հսկայական նվաճում եր, բայց դեռ կան 2250 հազար գործազուրկներ: Տեխնիկական փոփոխություններն այնպիսի եյին, վոր մենք կարող ենք նույն տնտեսական գործունեյությանն համապատասխան կազմություն առանց հասնելու գրադադարի հրենաց վոր 1929 թվին, առանց հասնելու գրադադարի հրենաց վոր 1933 թվին: Այդպիսի նույն մակարդակին»:

Ինչ վերաբերում եւ գործազրկության բացարձակ թվերին, ապա նրանք այնքան անվստահելի յեն, այնքան կեղծված են, վոր իմաստ չունի այդ թվերի վերաբերությունը: Այդպես, որինակ, Թրանսիայի համար 1933 թ. փետրվարին գործազուրկների ամենաբարձր թիվը ցույց եւ տրվում 331,1 հազար:

Թե վոր չափով կեղծված եւ գործազուրկների թիվը Գերմանիայում, ցույց եւ տալիս հետեւյալ զուգադրումը (այս բոլորը պաշտոնական տվյալներ են):

1929 թ. ոգոստոս | 1933 թ. ոգոստոս
միլիոններով

Զբաղված են ընդամենը հիվանդանոցային	
կասուաների վիճակգրությամբ	18,77
գործազուրկ են ընդամենը	1,27
Ընդամենը	20,04
	12,72
	4,12
	16,84

1 «Նյու Ռիպարլիկ», 1933 թ. 18 հոկտեմբերի, էջ 262:

2 «Տայմ», 28 նոյեմբերի 1933 թ.:

2,2 միլիոն բանություն տարվա բնբացքում պարզապես տեսացել եւ գերմանական վիճակագրությունից: Նրանք աշխատանք չունեն, բայց պաշտոնապես նրանք գործազուրկ չեն: Այս շարքը պետք է դասել նաև այն միքանի հայուր հազար մարդկանց, վորոնք կազմում են տարբերությունը նոր աճած բանվորական թրիտասարդության ու մահվան կամ հաշմանդամության հետեւվանքով աշխատանքի շուկայից հանված բանվորների միջև: Վերջապես, հայուր հազարավոր մանր գյուղացիները, արհեստավորները, մանր առևտնականները, վորոնց ճգնաժամը գրկել երենց «ինքնուրույն» գոյությունից և վորոնք նետված են գործազուրկների շարքերը:

ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԻԶԵՑՈՒՄԸ

Աշխատավարձի բուրժուական վիճակգրությունն այնքան կեղծ եւ ու անվստահելի, վոր չի կարելի մինչեւ անդամ լրիվ գրադադար բանվորների իրական աշխատավարձի իջեցման պատկերը տալ: Փորձի համար վերջնենք աշխատավարձի վիճակագրությունը գերմանիայում:

Լրիվ գրադադար բանվորների դատումը պակասում եր յերեք գծով:

ա) Ռաբորիֆից բարձր յեղած աշխատավարձի դրույքների իջեցում:

բ) Տարիփային դրույքների իջեցում:

գ) Խարկերի ու հանուրդների բարձրացում:

Մենք վերցնում ենք սինարարական արդյունաբերության վերաբերմաբ յեղած տվյալները՝ աշխատավարձի պատճենական վիճակագրության հիման վրա:¹

1 ՏՏԱՐԻՖԻՑ բարձր դրույքները անուղղվ գերմանական վիճակագրությունն հասկանում են այն լրացուցիչ աշխատավարձը, վոր ստանում են հատուգ կամ գործաքըն աշխատառ բանվորները, և վորն ավելի բարձր եւ գալիս տարիփայի հաստատված ժամավարձից:

2 ՎԿԻՐԱԴԱՎՈՒՄ ունդ Սահամատիկը, 1933 թ. № 17, էջ 544.

Միջին աշխատավարձի իջեցումը 1929 թ. ոգոսուից
մինչեւ 1932 թ. ոգոսունը

Բոլոր խոշոր քաղաքները միասին վեցըսած (100 հազարից ավելի բնակչությունուն)՝

Բրական համախառն դատաւմի իջեցումը
Բանվորների խմբեր

Քարտաշներ	— 41,8 %
Առաղձագործներ	— 34,9 %
Շինարարական սևաբանվորներ	— 33,5 %
Ստորերկրյա բանվորներ	— 33,9 %

1932 թ. ոգոսուսի ու 1933 թ. ոգոսուսի միջև ընկած տարվա ընթացքում, արդեն ֆաշիստական ռեժիմի ժամանակ, տեղի ունեցած շինարարական բանվորների տարիփային դրույքը ների հետագա իջեցում կլոր հաշվով 5 %-ուի:

Մյուս կատեգորիաների բանվորների տարիփային դրույքների իջեցումը մի փոքր ավելի պակաս եր. 1929 թ. հոկտեմբերից մինչև 1933 թ. փետրվարը մետաղագործական արդյունաբերության վրահայալ բանվորների դրույքները կրնաւիթին 18,1 %-ուվ, իմրական արդյունաբերության մեջ—18,7-ից մինչև 18,9 %-ուվ, տեսական բանվորներին—13,9-ից մինչև 15,5 %-ուվ: Մրա վրա տվելանում է նաև «տարիփայից բարձր» յեղած դատումի կրնաւումն 5—8 %-ուվ:

Բայց բանվորներին վճարվող գումարը ճգնաժամի ընթացքում պակասում է նաև բազմաթիվ հարկերի ու մուծումների շնորհիվ.

ա) Բարձրանում է նանուշդը սոցիալական ապահովագրության համար: Գործազրկությունից ապահովագրելու համար կատարվող մուծումը ավելանում է աշխատավարձի 1,5 %-ուվ¹:

բ) Ճգնաժամի ժամանակ նոր մացրած հարկը, 100 մարկից ավելի ամսական դատումի 1 %-ը՝

¹ Նոյեմբերի վերջին՝ մուծումը 1,5 %-ով ել բարեբացվեց:

գ) «Ոգնություն բա ընտանեկան դրույթամ» բոլոր ամուրի բանվորները 75-ից մինչև 150 մարկ դատում ունենալու դեպքում վճարում են ամսական դատումի 2 %-ը, իսկ 150-ից մինչև 300 մարկ դատում ունենալիս—3 %-ը (արդյունաբերական բանվորների կեսից ավելին ամուրի յե):

դ) «Կամավոր» ոգնություն աշխատանքներ ստեղծելու համար աշխատավարձի 1-ից մինչև 2 %-ը:

ե) «Ոգնություն ձմեռային նպատակներ տալու համար»—ամսական մուտքի ժամկա աշխատավարձը:

զ) Անթիվ առանձին «գանձումներ»: հարկադրական բաժանորդագործ ֆաշիստական մամուլին և այլն:

է) «Թաղաքացիական հարկ»—տարեկան 6 մարկ:

Այս բոլոր նոր հարկերն ու գանձումները կազմում են աշխատավարձի առնվազն 5 %-ը:

Այդպիսով, լրիվ զբաղված բանվորների դրամական աշխատավարձի իջեցումը կազմում է, նայած արտգրության նյութին, 25-ից մինչև 50 %. աշխատավարձի իջեցումն ավելի մեծ եր լավ վճարվող կատեգորիաների, քան թե ցած վճարվողների համար:

Իրեն սրան հակազին՝ ապրուստի մինիմումի ինտեքսն հետևյալն եր (1925—1929 թ. թ.=100)²:

	Դեկտեմբեր • 1929 թ.	Հոկտեմբեր 1933 թ.	Իջեցումը առկումներով
Անդամներ	104	81,6	21
Բնակարան	116	110,6	5
Սնունդ	101	74,8	26

Ապրուստի մինիմումի պաշտոնական թվերն անկասկած ավելի մեծ իջեցում են ցույց տա լիս, քան թե կա իսկապես²: Բայց

¹ Կվերտագիտ ունդ Սաափստիկ, 1933 թ. № 21, էջ 670:

² Առանձնապես անբավարար ե բնակարանավարձի վերաբերյալ ծախքերի տեսակաբար կշուրը վորը (բնակարանավարձը) համեմատաբար անփոփել եւ

յեթե մինք մինչև անգամ պաշտոնական թվերը ձիշտ համարենք, ապա լրիվ զբաղված բանվորների համար ստացվում է աշխատավարձի իջեցում 5-ից մինչև 32 %:

Այնինչ լրիվ զբաղված բանվորները գերմանական բանվոր դասակարգի փոքրամասնությունն են կազմում: Արհմիությունների կատարած վիճակագրության համաձայն՝ 1932 թվին միջին թվով կային:

<i>Լրիվ զբաղված բանվորներ</i>	<i>Մասնակիորեն գործազուրկներ</i>	<i>Բոլորովին գործազուրկներ</i>
-----------------------------------	--------------------------------------	------------------------------------

33,6 %	22,6 %	43,8 %
--------	--------	--------

Գերմանական բանվոր դասակարգի կենսամակարդակը նգնածամի ընթացքում հսկայական չափով իջել է, մասնավանդ վոր գործազրկության նպաստները կրճատվում եյին արագ տեմպով և գործազուրկներին պահելու ծանրությունն ավելի ու ավելի ընկերում եր աշխատողների ուսերին:

Բանվորների, ծառայողների ու չինովնիկների (բանվորների, համար ջոկ հաշվարկումներ չկան) լնդիանուր յեկամաւը կոնյունկտուրի համատիտությամբ¹ կազմում եր (միլիարդ մարդերով).

<i>1929 թ.</i>	<i>1930 թ.</i>	<i>1931 թ.</i>	<i>1932 թ.</i>	<i>(առաջին կիսամյակ)</i>	<i>1933 թ.</i>
----------------	----------------	----------------	----------------	--------------------------	----------------

44,5	41,0	33,5	25,7	12,5
------	------	------	------	------

1929 թվից մինչև 1933 թ. իջեցումը կազմում է 42,2 %² Սրա վրա պետք է ավելացնել հարկերի ու գանձումների ավելացումն առնվազն 5 % ովով: Այստեղից՝ իջեցումն 47,2 % ովով: Յեթե կարելի լիներ ջոկել բանվորներին, ապա իջեցումն ավելի մեծ կլիներ, վորովինետև չինովնիկների մեջ գործազուրկներ ավելի քիչ կան, և նրանց ոռնիկներն ավելի պակաս չափով են կրճատվել:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մեջ բերված թվերն ավելի շուտ չափազանցացրած են իրական դրության համեմա-

¹ 1933 թ. «Կոնյունկտուրային-վիճակագրական ժողովածու», եջ 80, «Հաբաթական տեղեկատու», № 23, 3 սեպտեմբերի 1933 թ.:

տությամբ. յեթե նրանք մինչև անգամ ճիշտ լինելին, յեթե նույնիսկ ապրուստի մինիմումի պաշտոնապես հաշվարկված եժանացումը 21 % ովով՝ ուղիղ լիներ, ապա այն ժամանակ ել բոլոր բանվորների, ծառայողների ու չինովնիկների համար միջին թվով 26 % ով իրական իջեցում է սացվում, իսկ բանվորների համար, իհարկե, դեռ միքանի տոկոս ել ավելի:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿԱՆԵՐԻ ԴՐՈՒՅՑԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ

Գործազրկության նպաստների կրճատումն յերկու հիմնական գծերով ենթանում:

ա) նպաստ ստացողները՝ փոխադրվում են ավելի ցած կատեգորիաներ:

բ) առանձին կատեգորիաների նպաստների չափն իջեցվում է:

Գրանցված գործազուրկների տոկոսն առանձին կատեգորիաներով

Տարիներ	Գործազրկության ների ապահովագումն միջնակամատ մակարդակում	Բարեկործակազմում կամ նպաստ առանձին կատեգորիաներում	Վոչ միապատճենական առանձին կատեգորիաներում
1929 (հունվար)	78,8	5,1	—
1933 (ոգոստոս)	8,7	28,3	38,9 24,1

Սակայն իրականության մեջ նպաստ չստացողների տոկոսը կլոր բվով հավասար է 50-ի, վորովնետև, ինչպես մենք վերեռում ապացուցեցինք, առնվազն 2,2 միլիոն գործազրկության այլևս գրանցման չեն ներկայանում, կորցրած լինելով աշխատանք կամ նպաստ ստանալու ամեն մի հույս:

Գործազրկության նպաստները սաստիկ կրճատվեցին (նախորդ ավելի քիչ զգալի իջեցումից հետո) Պատենի 1932 թ. հունիսի 16-ի կարգադրությամբ («յիշելորդ արտակարգ դեկրետը»): Դրույքներն իջեցվեցին հետևյալ ձևով. նրանք յերեք խմբի բաժանվեցին՝ բնակավայրերի մեծության համաձայն. և մի կողմից՝

¹ Պաշտոնական բացարձակ թվերը մենք հաշվարկել ենք տոկոսներով:

Փոքը քաղաքներում ապրող բանվորներին, մյուս կողմից՝ լավ վճարվող բանվորներին տրվող նպաստը սաստիկ կրծատվեց: Նպաստի կրծատումը կաղմում է.

Առաջին կարգի համար	15-ից մինչև 20 %
Հինգերորդ	> 22-ից > 44 %
Տասնմեկերորդ	> 45-ից > 62 % ¹

Բարեգործական նպաստների դրույքներն ամուր կերպով հաստատված չեն: Քաղաքային վարչությունների պաշտոնյաներն ամեն մի առանձին դեպքում վճռում են այն իրենց հայեցողությամբ: Այդ պատճառով՝ մենք կարող ենք միմիայն հետեյալ թվերը բերել.

1932 թ. — Քաղաքային վարչությունների ընդհանուր ծախքերը բարեգործական նպաստների համար (պետության տված 672 միլիոն դրամիայի հետ միասին) կազմում են 1680 միլիոն մարկ, ամսական 140 միլիոն մարկ:

1933 թ. — 1933 թ. սեպտեմբերի 22-ի որենքը քաղաքային վարչությունների ծախքերը (պակասեցրած պետական դրամիայի հետ միասին) կրծատում ե մինչև 86,66 միլիոն մարկ ամսական, այսինքն 38 %-ով:

Քանի վոր բազմաթիվ քաղաքային վարչություններ սնանկացել են, ուստի նրանք առհասարակ վոչ մի բարեգործական նպաստ ել չեն լճարում:

Սոցիալական ապահովության բոլոր մյուս տեսակները, ինչպես՝ հիմնադրության, հաշմանդամության նպաստները, սնունդը դպրոցներում և այլն ճգնաժամի ընթացքում սաստիկ կրծատվեցին:

Զափաղանց շատ ժամանակ ու տեղ պետք կլիներ մյուս կապիտալիստական յերկիրների համար ել նման հաշվարկումներ կատարելու համար: Պատկերն ըստ եյության ամենուրեք միատեսակ ե: Հստ յերևութին, բանվորների դրությունը ճգնաժամի ընթացքում համեմատաբար ավելի քիչ ե վատթարացել Անգլիայում, վորտեղ աշխատավարձը հարաբերաբար ավելի քիչ ե իջեց-

¹ «Մայիսաբարայասբլատ» («Աշխատանքի հարցերի վերաբերյալ պետական լրագիր») 1932 թ. № 18, էջ 1/100, ու 1/111:

ված¹, իսկ գործադուրկների հիմնական մասսան դեռ շարունակում ե կանոնավոր նպաստ ստանալ (այստեղ ել ներկայումս իշխացում ե՝ կատարվում): ՀԱՄՆ-ում գործարանային արդյունաբերության վճարած աշխատավարձի գումարը (1923—1925 թիվը=100) 1929 թիվի 106-ից իջակ մինչև 40,5-ը 1933 թիվի առաջին կիսամյակում, այսինքն 62 %₀-ով: Արդյունաբերության մյուս ճյուղերում (առետուր, գյուղատնտեսություն) նվազումն ավելի պահանջման մասնակի մինիմումի ինդեքսն 100-ից ընկավ մինչև 72,5 %₀-ը²: Այսպիսով՝ պատճենական տվյալները ցույց են տալիս ամերիկյան բանվոր գասակարգի իրական յեկամուտի նվազում 1929 թիվի մինչև 1933 թիվը 34,5 %₀-ով: (Այս կրծատումն անտարակույս միքանի տոկոս ավելի բարձր դուրս կգար, յեթե պաշտոնական տվյալները քննադատորեն մշակվեյին): Ամերիկյան գործադուրկների սոսկալի դրությունը, վորոնք վաչ մի իրավունք չունեն վորեւ կանոնավոր նպաստի և կախված են քաղաքային ու մասնավոր բարեգործությունից, լուսաբանում են ներքեւ բերված մի շարք որինակները, ինչպես նաև ՀԱՄՆ-ի թափառաշրջիկ յերիտասարգության կյանքի նկարագրությունները: Զբաղված բանվորների դրությունն ամենից ավելի վաելի վատթարացել ե ճապոնիայում, վորտեղ, չնայած յենի արժեգործանը, գրամական աշխատավարձը ճգնաժամի ընթացքում դեռ կրծատվել ե: Մինչև իսկ բուրժուական ազգյուրների ավագաներով՝ աշխատավարձի կրծատումը ճապոնիայում խոշոր ե յեղել, ինչպես յերևում ե հետեւյալ տվյալներից:

Աշխատավարձի դիմամիկան ճապոնիայում (1920 թ.=100)⁴

Միջին ապրեկան	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ. (հուլիս)
Անվանական աշխատավարձ	98,6	96,2	91,3	88,1	85,1
Բրական աշխատավարձ	103,9	98,7	90,7	88,1	88,4

¹ Տարիքային դրույթըների ինդեքսը (1924 թ.=100) 1929 թիվ 100-ից իջակ մինչև 94,5-ը 1933 թ., այսինքն, 5,5 %₀-ով: Ապրուստի պաշտոնական միջնմումը 1929 թ. 164-ից իջակ մինչև 143-ը 1933 թիվ հոկտեմբերին, այսինքն՝ 13 %₀-ով: Ցերե հաշվի առնենք կեղծիքը, ապա լրիվ զբաղված բանվորների դրությունը միմիայն քիչ ե վատթարացել Բայց կան խիստ զատ մասնակի գործադուրկները

² «Ֆերգերալ Ռեվելվ Բյուլետեն», 1933 թ. հոկտեմբեր, էջ 629:

³ «Սերվեյ ոֆ Կարբենա Բիզնես», 1932 թ. և 1933 թ. հոկտեմբեր:

⁴ «Միտասուրիշի բյուրոյի ամսական տնտեսական բյուլետեն»:

Մինչդեռ կյանքի արժողության ինդեքսը աճում էր ցույց տալիս, վորը 1914 թվի հունիսի վերաբերմամբ, ընդունելով այն-100, կազմում էր.

1931 թ.	135,5
1932 թ.	134,8
1933 թ. (առաջին 10 ամիսների միջինը)	149,3

ԱՆԱՍՏԱԴԱՐԱԿԱՐ

Գործադուրկների միլիոնալիքը մասսաների յերկյուղից՝ բուրժուական կառավարություններն ու ռեֆորմիստական արհմիւթյունները շատ յերկիրներում ազիտացիա ելին մղում աշխատաժամանակը պարտադրաբար կրծատելու ոգտին, «աշխատանքը պլանաչափորեն բաշխելու» ոգտին, ինարկե, համապատասխան չափով իջեցնելով աշխատավարձը. Այս բանը լայն մասշտաբով իրագործվեց միմիայն Ռուզվելտի «կողեքսում», վորը, սակայն, ընդհանուր առմամբ միմիայն սրբագրում էր գոյություն ունեցող գրությունը: 1933 թվին միջին աշխատաշաբաթը ՀԱՄՆԻ գործարանային արդյունաբերության մեջ հավասար էր 34,8 ժամի:¹ Սակայն այս միջին թիվը մի հսկայական անհամաչտություն և թագծնում: Բրդի արդյունաբերության մեջ 1932 թվին աշխատում ելին—9 գործարան՝ շաբաթը 60 ժամ գիշերվա հերթին, 2 գործարան՝ 65 ժամ, մի գործարան՝ 67 $\frac{1}{2}$ ժամ (նույնպես գիշերը): Բամբակագործական արդյունաբերության մեջ—39 գործարան որական 11 ժամ գիշերվա հերթին, 10 գործարան՝ 12. ական ժամ:²

Կապիտալի բացարձակ անտարբեր վերաբերմունքը դեպի բանվորների վիճակը ցույց է տալիս այն փաստը, վոր Անգլիայում հարյուր հազարավոր գործազուրկների առկայությունը արդյունաբե-

րության նույն ճյուղի մեջ աշխատաժամանակը վո՞չ միպլի չի կրնաւլած, այլև արտաժամյա յեն աշխատանմ: 1933 թ. սեպտեմբերին աշխատում ելիթ³:

Արդյունաբերություն	Արտաժամյա ժամեր		Վոչ լրիվ աշխատաժամանակ	
	Բանվոր-ների տոկոսը	Արտաժամյա ժամերի թիվը շաբաթական	Բանվոր-ների տոկոսը	Զաշխատած ժամերի քանակը շաբաթական
Կամիու (սանրաբրային)	26,5	6	12	11
Բրդի	23,0	7	16	10
Կողեղենի	16,0	7 $\frac{1}{4}$	37	9 $\frac{1}{2}$

Կասկած չկա, վոր նույնպիսի գրություն և իշխում նաև մյուս պետությունների մեջ, վորոնք այդպիսի մանրամասն վիճակագործություն չեն հրապարակում:

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՆԱՍՏՈՒՔ

Վերջապես մատնանշենք մի նոր յերեսութ, այն ե՝ «կամավոր» հարկադրական աշխատանքի ավելի ու ավելի ծավալվող չափերը, վորին ամենազանազան ձևերով ավելի ու ավելի մեծ քանակությամբ յերկիրներում լծում են յերիտասարդությանը: Այս բանն ամենից ավելի զարգացած և ֆերմանիայում և ՀԱՄՆ-ում: Յերիտասարդությունը տեղափորվում և ճամբարներում և ոգտագործվում զանազան անվորակ աշխատանքների համար (ճանապարհների շինարարություն, ճահիճների չորացում, ջրանցքների, ռազմական բերդերի կառուցում և այլն): Միաժամանակ յերիտասարդությանը վարժեցնում են ռազմական գործին: Հար-

¹ Պաշտոնական «Լեյբոր Դագետ» («Բանվորական լրագիր»), 1933 թվի հոկտեմբեր

² «Անգլիա ով Կարբենտ Բիզնես»: 1933 թ. հունվար, էջ 28:

³ Արխատանքի բաժնի պաշտոնական տվյալներով, զետեղված Աշխատանքի Ամերիկայն Ֆեդերացիայի «Ամերիկեն Ֆեդերելիսիստ» որդանում, 1933 թվի փետրվար, էջ 184:

Հաղորական աշխատանքի մյուս ձեր—այդ գործազուրկ բանվորաներին կուլակային ֆերմաներն ուղարկելու ե, վորտեղ նրանք պարտավոր են ամբողջ ամառն աշխատելու մննդի ու նվազագույն գրպանադրամի համար: Հրաժարվելու դեպքում նրանք կորցնում են գործադրկության նպաստի կամ բարեգործական նպաստի իրավունքը: Հարկադրական աշխատանքի սիստեմը, վոր միշտ գոյություն՝ և ունեցել գաղութներում, ամենատարբեր ձեերով ավելի ու ավելի ծավալում ե գտնում բարձր զարգացման հասած կապիտալիստական յերկիրներում: Ամերիկան գործազուրկների գրությունը նկարագրելու համար բերում ենք միքանի քաղվածքներ բուրժուական աղբյուրներից:

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԱՆԵՐԻ ՎԵՃԱԿՆ ԸՍՏ ԻՐԵՆՑ ՍԵԲԱԿԱՆ ՆԿՈՐԾ.ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՍԵՐԳԵՅ ՌՈՄԱՆՈՎ: Սան Ֆրանցիսկո: Կալիֆորնիա

«6 ամիս ե արդեն, վոր յես աշխատանք եմ փրնուրում: Յես մինչև անգամ հույսի նշույլ չունեմ, թե ընդհանրապես յերբեք աշխատանք կստանամ: Յերբ յես վորեն տեղ եմ գտնում, վարիչն ինձ ասում ե. «Եգուց արի»: Իսկ յերբ յես եգուց գալիս եմ, նա դարձյալ նույնն է ասում: Լոկ խոստումներ միայն: Յես քնելու համար տեղ չունեմ»:

ՊԱՏ ԴՈԳԵՐՏԻ: Լու-Անժելոս: Կալիֆորնիա

«1931 թվին յես բոլորը միասին աշխատել եմ 5 որ: Վերջապես, մի անգամ յես ամուսնացած մարդկանց վերաբերող մի հայտարարություն տեսա, վորոնք պետք ե հաղորդելուն իրենց անունը, վորպեսզի աշխատանք ստանային նավթային շրջաններում: Այդ բանը յես կարդացի յերկուշաբթի առավոտյան: Ժամը

¹ Քաղվածքները մեջ են բերված բուրժուական գրող Ա. Յ. Յոհաննի «Ամերիկայի կործանումը լիառատությունից» գրքի համաձայն, էջ 163—170. Քեռվին, 1932 թ.:

8-ից 50 ըոպե անց յես արդեն այստեղ եյի: Ժամը 2 1/2-ին հասավ վերջապես իմ հերթը: Նրանք ինձ ամենազանազան տեսակի հարցեր տվին և վերջապես ասացին, վոր ինձ տեղեկություն կտան յերեք շաբաթը վա ընթացքում: Յերեք շաբաթն արդեն վեց յերկարու ձիգ ամիս գարձավ: Յես միմիայն այն պատճառով քաղցից չեմ մեռել վոր իմ կինը գեռ աշխատանք ունի: Յերբ նա աշխատում ե, շաբաթական 21 դոլար և ստանում: Այս շաբաթ տանը նստելու հերթը նրաննե: Հետեւյալ շաբթին նա նորից կաշխատի»:

ՄԱԿ ԿՈՐՄԻՒ: Սան-Ֆրանցիսկօ: Կալիֆորնիա

«Յես աշխատանք չունեցողներից ու այստեղ թափառողներից շատերից մեծ եմ: Այժմ յես թափառաշրջիկություն եմ անում: Յես ծեր մարդ Այ, վաղուց կորցը եմ յերբեկց աշխատանք գտնելու հույսը: Յես այլս աշխատանքի չեմ ձգտում, վորովհետեւ արդեն անց եմ կացրել այն հասակը, յերբ այդ առհասարակ հնարավոր եր: Յես մինչև իսկ ճշգրիտ կերպով ասել չեմ կարող, թե իսկապես քանի տարի յե, ինչ յես վաղում եմ աշխատանքի հետեւց: Բայց չե վոր յես աշխատել եմ միշտ, յեթե միայն կարողացել հմ թեկուզ վորեն աշխատանք գտնել: Հանքային ձեռնարկություններում, խճուզային աշխատանքներում ու անտառում: Իսկ այժմ յես, իհարկե, այս հասակում հերթի յեմ կանգնում սուպ սատանալու համար: Յես դարձել եմ այն, ինչ վոր միքանի ժամանակից հետո դառնալու յեն այն յերիտասարդ տղերքը, վորոնք բուրն ել դեռ կարծում են, թե նրանք մի գեղեցիկ որ հարստանալու յեն: Յես ծերացած եմ, սովահար, քըրջոտված ու վոջլոտած: Բայց յես կարող եմ ասել քեզ, վոր վերջին յերկու շաբաթվա ընթացքում յես պտտեց իմ ամբողջ յերկիրը՝ Սան-Ֆրանցիսկոյից մինչև Սան-Խոզե ու Պուտան-Շեյս, և ամեն տեղ տեսել եմ յերիտասարդ, ուժեղ, աշխատանքի ձգտող տղերանց, վորոնք

նույնպես ընկել են, ինչպես յես... Յես գեռ ելի կարող եմ աշխատել Ընդամենը յերեք շաբաթ առաջ միայն յես տեղ ստացա, վորակեղ պետք եւ առավոտյան ժամը 5-ին վեր կենայի ու մինչև յերեկոյան ժամը 6-ն աշխատելի: Յես այդ աշխատանքը կատարում ելի—մեծ մասամբ 12 ժամ տևող աշխատորում—մի դոլարով»:

ՏՈՄ ՄՈՒԼԻ: Սիսլ: Վաշինգտոն

«Մոտ մի տարի յե, վոր յես աշխատանք չունեմ: Յես հանքարանվոր եմ, բայց բոլոր հանքային ձեռարկությունները փակ են: Մոտ ժամանակներս յես դարձյալ յեղա Գրասվարելյում, վորպեսզի աշխատանք գտնեմ հանքահորում... Յես գնացի Սոլտ-Լեյկ-Սիտի, վորպեսզի այստեղից Պոլ-Սիտի անցնեմ... Այնուհետեւ յես ման՝ յեկա ամբողջ Արևմուտքը, վոչ մի տեղ աշխատանք չկա. վերջապես յեկա այստեղ: Յես այլև ջանք չեմ գործ կնում, յես ուզում եմ միմիայն գիշերեւու ոթեան գտնել: Բայց այդ ել հիմա հարուստների արտոնությունն եւ դարձել: Հիմա ինձ քիչ և հաջող վում քնել: Յես, իհարկե, հերթ եմ կանդնում նույնպես սուպ ստանալու համար, բայց, ճիշտ եմ ասում, վոչ այն պատճառով, վոր այդ ինձ հաճույք եւ պատճառում: Հաճախ յես զրուցում եմ տղերանց հետ. վոմանք կարծում են, թի քաղաքն, իսկապես ասած, սարսափելի քիչ բան եւ անումն նրանց սուպ տալով: Բայց այդ դատարկ բան եւ Հաճախ յես կանգնել եմ յերեքական ժամ, սուպը չի բավկանացել և յես վոչինչ չեմ ստացել: Իսկ քաղաքային գիշերոթեաններում յես ընդհանրապես վոչ մի անգամ ել գեռ տեղ չեմ զտել: Մինչև գուլ իերեք ժամ սուպի յես սպասում, ուրիշներն այդ նույն միջոցին նույնպես յերեք ժամ կանգնում են գիշերոթեանի առաջ: Յեվ յերբ սուպից հետո դասիս եմ գիշերոթեանը, այն արդեն վաղուց լեփլեցուն ելինում»:

ԶՈՐԱ ԴՈՑ: Ֆենիքս: Արիզոնա

«Յես պողպատ հալող եմ: Վերջին 30 տարին աշխատում եյի պողպատաձուլական գործարաններում: Յերեք տարի առաջ նրանք ինձ փողոց նետեցին, և այն որվանից յես արդեն աշխատանք չեմ գտնում: Իմ խնայած փողերը վաղուց կերպած են: Յերեկ յես քնեցի նավաշինարանում չարդախի տակ: Յես եւ իհարկե, սուպի համար հերթ եմ կանգնում «Հուվերի կաֆեյում», ինչպես ասում են տղերքը: Յես շատ ել գոն չեմ զրանից: Յեթե մենք ինքներս այդ գործը մեր ձեռքը վերցնեինք, կերակուրն ավելի լավ կլիներ: Աշխատանք յես այլևս չեմ փնտրում: Յես յեկել եմ այն յեղրակացության, վոր աշխարհը վերջացել եւ ու աշխատանքը վերջացել եւ: Այս ե այն ամենը, ինչ վոր յես ուզում եյի ասել: Լավ ե, վոր կինս ու յերկու վորդիներս—նույնպես գործադուրկներ—մեռան: Այդպիսով յես մնացի մենակը»:

ՋՈՆ ԲՈՆԱՎԻՏԻ: Լոս-Անջելոս: Կալիֆորնիա

«... Մինչև 1928 թ. յես ածխափոր եյի: Հետո ինձ արձակեցին: Միքանի ժամանակ յես դիմացա խնայություններիս ոգնությամբ, իսկ հետո իմ հին բարեկամներն հոգացին իմ մասին, և այդպիսով յես ու իմ ընտանիքը ամենկին ել վատ չեյինք ապրում: Իսկ հետո յես մտածեցի. արի՞մի գնամ արևմտյան ափը, գուցե այնտեղ կարելի յե մշտական աշխատանք գտնել: Յես ուզերկեցի Դետրոյտի ու Ռախվուդի վրայով: Ամբողջ կես տարվա ընթացքում յես ընդամենը 13 որ եմ աշխատել: Միքանի տեղերում 24 ժամ հերթ եմ կանգնել՝ աշխատանք ստանալու համար—առավոտյան ժամը 5-ից մինչև հետևյալ որվա առավոտյան ժամի 5-ը: Բայց յես վո՞չ աշխատանք եյի ստանում, վո՞չ քլունգ, վո՞չ բան: Յես յեկա կոլորագո կեղառուված, սոված, առանց մի կոպեկ ունեցում էր»:

բանը 1930 թվին եր: Վոստիկանները կարծում եյին, թե յես վատ մտադրություններ ունեմ և ինձ 5 որ նստեցրին: Հետո ինձ տարան դատավորի մոտ, վորն ինձ մի տարվա բանտարկության դատապարտեց: Իսկապես՝ ինչու համար, — յես այժմ ել չգիտեմ: Բանտում նստած յես պետք ե որական 9 ժամ աշխատեյիր, որական մի ափսե շիլա ու մի ափսե կարտոֆիլ ստանալու համար: Յես աշխատեցի, որինակ, Յ ամիս կենոն-Սիտիում, իսկ հետո մի մեծ ֆերմա ընկա, վորտեղ յես պետք ե որական 10—12 ժամ աշխատեյիր: Յերբ այս բոլոր խարեբայությունը վերջացավ, նրանք ինձ տվին այն կոստյումը, վոր այս բոպեյիս հաղիս ե, և բացի գրանից՝ հինգ դոլար: Յերբ յես այդ 5 դոլարը ծախսեցի, այնպես սնանկ դարձա, ինչպես գրանից առաջ: Վերջապես յես փոտով յեկա Սան-Ֆրանցիսկո և ամեն որ աշխատանք եյի փնտրում—աշխատանք չկա: Յես սովոր եմ: Յես արդեն վոջլոտել եմ: Յես միշտ քնում եմ բաց յերկնքի տակ, ինչ յեղանակ ուղում ե՝ լինի: Յես վաղուց արդեն ամերիկյան քաղաքացի յես, ամբողջովին վոջիւներով ծածկված, և սովոր: Քանի վոր յես այս յերկու արատները չունեյի, վորքան ինձ հայտնի յե՝ յես կարգին բուժուա եյի:

ՀԱՐԻ ԼՈԴԱՆ: Տեկսոն: Արիզոնա

«Յես ամուսնացած եմ: Յերկու տարի յե արդեն, վոր յես աշխատանք չունեմ, 1931 թվի գարնանից, յերբ աշխատում եյի բամբակի դաշտերում: Կինս ու յերկու յերեխաներս այժմ գնացել են Լոս-Անջելոս, վորով հետեւ տղաներիցս մեկը կարող ե այնտեղ շաբաթական 12 դոլար վաստակել: Նրանք ապրում են դրանով: Յես վաղուց արդեն հերթի յեմ կանգնում սուպի համար: Յերբեմն յես քնում եմ ապրանքավագոններում, յերբեմն ել դատարկ տներում: Միքանի ժամանակ տեսակ յես աշխատում եյի քաղաքի համար՝ աղբահանության գոր-

ծում: Ամեն որ 50 կամ ավելի հոգի վորփրում եյին աղբը, վորպեսդի վորեն ուտելու բան գտնեն—հացի կտորանք, կազամբի ու մաի մնացորդներ և առհասարակ ամեն բան, ինչ վոր կարելի յե ուտել: Բայց թափթփուկներից ամենալավը նախքան այդ ջոկում եյին աղբը գուրս տանող բանվորները, վորպեսդի հետո ծախեն այն: Յես կարող եմ ասել քեզ, վոր յես շատ քաղաքներում տեսնեմ եմ, թե ինչպես շատ, իսկստ շատ ընտանիքներ միմիայն նրանով եյին ապրում, ինչ վոր գտնում եյին աղբակույտերի մեջ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԱՓԱՌԱԵՐՁԻԿԱՅԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Տնտեսական ճգնաժամը ՀԱՄՆ-ում և նրանից բղխող գործադրկությունը, վորը 1932 թ. դեկտեմբերին (պաշտոնական տրվյալներով) 12 միլիոնի հասավ, ծնողական տնից վտարեց անթիվ քանակությամբ յերեխաների կամ, ավելի ճիշտն ասած՝ յերիտասարդություն, վոր այժմ թափառում ե մեծ ձանապարհներին... Թափառաշրջիկություն անող յերիտասարդության թիվը 200 հազար ե, մի ուրիշ վիճակագրություն տալիս ե 600 հազար թիվը, իսկ նյուտոն Դ. Բեկկերը, մինիստրի նախկին ոգնական ու ոգնության բարեգործական կազմակերպության նախագահ, հայտարարեց. «Յես համոզված եմ, վոր յերիտասարդ թափառաշրջիկութիվը գերազանցում ե բոլոր պաշտոնական տվյալներից»¹:

«Ոտարերկրացու վրա ծանր տպագորություն ե գործում, յերբ նա ՀԱՄՆ-ի միքանի քաղաքներում հանդիպում ե յերիտասարդ մարդկանց մաշված, փոշոտված շորերով, սովոր ու անքնությունից ուժասպառված դեմքերով, վորոնք ճամբարաձեւ տեղավորված են հասարակական պարտեզներում կամ արվարձանների ծայրին: Վեց ամիս ՀԱՄՆ-ում մնալու ընթացքում, յերբ յես ամբողջ յերկիրն անցա արևմուտքից դեպի արևելք, ինձ հաճախ ե դեպք յեղել հանգիպելու այդ գժբախտ յերիտասարդ մարդկանց: Սկզբում յես տեսա նրանց նյութորկում, բոլոր թափառաշրջիկների այդ Մեկ-

¹ Ֆ. Սուպովը «Նոյեմբերի գրեսում»: 1933 թ. 14 նոյեմբերի.

կայում, վորտեղ նրանք ճամբար եյին սարքել կենտրոնական պարկում, ստորերկրյա յերկաթուղու վագոններում կամ կայարանների միջանցքներում: Զիկագոյում նրանց թիֆս ել ավելի յեր: Սակայն ամենից ավելի հաճախ նրանք հանդիպում են հարավում կամ հարավարևելքում, վորովհետեւ տաք կլիման ու մեծ նավահանգստային քաղաքներում աշխատանք գտնելու հույսը նրանց քաշում և մոգական ուժով: Նոր-Որլեանում ու Լու-Անժելոսում որ չի անցնում, վոր նրանց ամբողջ տասնյակներով չանդիպեք:

Վ՞րտեղից ե դուրս գալիս այս թափառաշրջիկ յերիտասարդությունը: Մեծ մասամբ դրանք 18-ից մինչև 21 տարեկան յերիտասարդ մարդիկ են, վորոնք հեռացել են ծնողական տնից, վորտեղ կարիքն ու աղքատությունն ե թագավորում: Վորովհետեւ նրանք անկարող են աշխատանք գտնելու իրենց հայրենիքում, ուստի նրանք հեռանում են, վորպեսդի չափելացնեն հաց ուտող-ների թիվը: Հաճախ նույնիսկ ծնողներն իրենք խորհուրդ են տալիս՝ բախտը վորևե ուրիշ տեղ փորձել: Այդ յերիտասարդ մարդիկ ամենեին ել ամենաանընդունակ ու ամենաանկուլտուրական մարդկանցից չեն: Վաշինգտոնի հասարակական խնամատարության վարչության հրապարակած զիճակագրական տվյալները ցույց են տալիս, վոր 7512 թափառաշրջիկներից, վորոնց 1932 թ. 3 ամսվա ընթացքում պետական նպաստ չի տրվել, 1966-ը հաճախում եյին ժողովրդական դպրոցները, 2 հազարը—միջնակարդ ու 258-ը—բարձրագույն դպրոցները: Նրանց ամենազաժան թշնամին ցրտերըն են. նրանք գերազանցում են ուղուրվել զիշերները և քնել ցերեկը: Նրանցից շատերը ամենասոսկալի զրկանքներ են կրում, մեծ մասամբ հագնված են շատ թեթև, հաճախ հիվանդանում են: Իսկ հիվանդանոցները, բացի խիստ լուրջ դեպքերից, ծանրաբունքվածության պատճառով իվիճակի չեն նրանց ընդունելու: Հյուսիսի ճանապարհների վրա հաճախ կարելի յետեսնել ցրտից մեռած դժբախտների դիակները: Յերիտասարդները մի մեծ քաղաքից մյուսն են թափառում, վորտեղից նրանց միշտ դուրս են քշում, վորովհետեւ այդ քաղաքները չեն կարողանում իրենց սեփական գործարկների համար գործ գտնել: Հարկադրված լինելով 24 ժամվա ընթացքում թողնել քաղաքի տերիտորիան, նրանք հուսահատ հլությամբ շարունակում են անում: Նրանք ամաչում են իրենց աղքատությունից: Թեև նրանք արագ կերպով սովորում են այլևս աշխատանք չի գույն իսկապես նրանք ամաչում են, վոր խորտակվել են: Նրանց գոյությունը ամենասոսկալին ե: Թե նրանք ինչպես են ապրում իսկապես, —յերեք չի կարելի ճշգրիտ իմանալ, վորովհետեւ նրանք չափազանց ծածկամիտ են, յերբ նրանց հարցուփորձ են անում: Նրանք ամաչում են իրենց աղքատությունից: Թեև նրանք արագ կերպով սովորում են այլևս աշխատանք չի գույն իսկական գոճրագործներ են դառնում: Նրանք յերեմն գողանում են, վորովհետեւ սովոր են ու մերկ, բայց հազվագյուտ գեղքերում են ու ժի ոգնության դիմում: Նրանք անընդհատ թափառում են մեծ ճանապարհների վրա, կորցնելով ամեն հույս: Նրանցից շատերն արդեն սիքանի անգամ լայնությամբ ու յերկարությամբ կտրելանցել են ՀԱՄՆ-ը: Այս կապակցությամբ պիտի ե նկատի ունենալ, վոր ուղերությունը նյու Յորկից Սան-Ֆրանցիսկո ամենակարճ ճանապարհով պահանջում ե չորս դիշեր և յերեք ցերեկ:

Կաթուղագծերի յերկայնությամբ նրանք իրենց ճամբարներն են սարքում, վորոնք թափառաշրջիկների ժարգոնով «ջունգլի» յեն կոչվում, կամ իրենց համար ոթեան են պատրաստում մեծ կամուրջների տակ ու այնտեղ խստորեն կազմակերպված ճամբարային կյանք վարում:

Համարյա թե բոլոր այս յերիտասարդ թափառաշրջիկներն զգուշանում են բարեգործական կազմակերպություններին դիմելուց, կազմակերպություններ, վորոնք, իդեպ ասած, արդեն չեն կարողանում բավարարել իրենց առաջադրված պահանջները: Յերիտասարդ թափառաշրջիկների համար յերիտասարդ թափառաշրջիկներին բնամարդ է անվագանցիք և անվագանցիք այս աշխատությունը, այս վայրի անկաշկանդությունը, նրանք չեն կարողանում տանել քարոզն ու դիսցիպլինան: Յեթե ծայրահեղ կարիքը նրանց հարկադրում ե յերեմն վորևե բարեգործական կազմակերպության դուռ բաղիւել, ապա նրանք ամենից առաջ ինդրում են իրենց աղգականներին բան չգրել: «Դրանից վոչինչ դուրս չի գա»—ասում են նրանք: Բայց իսկապես նրանք ամաչում են, վոր խորտակվել են: Նրանց գոյությունը ամենասոսկալին ե: Թե նրանք ինչպես են ապրում իսկապես,—յերեք չի կարելի ճշգրիտ իմանալ, վորովհետեւ նրանք չափազանց ծածկամիտ են, յերբ նրանց հարցուփորձ են անում: Նրանք ամաչում են իրենց աղքատությունից: Թեև նրանք արագ կերպով սովորում են այլևս աշխատանք չի գույն իսկական գոճրագործների են դառնում: Նրանք յերեմն գողանում են, վորովհետեւ սովոր են ու մերկ, բայց հազվագյուտ գեղքերում են ու ժի ոգնության դիմում: Նրանք անընդհատ թափառում են մեծ ճանապարհների վրա, կորցնելով ամեն հույս: Նրանցից շատերն արդեն սիքանի անգամ լայնությամբ ու յերկարությամբ կտրելանցել են ՀԱՄՆ-ը: Այս կապակցությամբ պիտի ե նկատի ունենալ, վոր ուղերությունը նյու Յորկից Սան-Ֆրանցիսկո ամենակարճ ճանապարհով պահանջում ե չորս դիշեր և յերեք ցերեկ:

Որեցոր աճում ե յերիտասարդ թափառաշրջիկների թիվը:

Ճանապարհին նըանք գյուղերում նոր կողմնակիցներ են գրավում: Այն տպավորությունն եւ ստեղծվում, վոր նըանց համար ամենակարևոր ժամանակ սպանելն է:

Վոստիկանության կողմից նշանակված անողոք տուգանք ները այդ յերիտասարդներին ել ավելի զաղտնամիտ ու ավերասան դարձին, ստիպեցին նըանց կազմակերպվել խմբերով կամ գենք կրել և թափառաշրջկների բանակն աճում և աճսե ամիս:

ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Բուրժուական վիճակագրությունն ել ավելի պակաս հնարավորություն եւ տալիս քանակական արտահայտությամբ նկարել ընդհանրապես գյուղացիության և մասնագորապես զյուղացիության առանձին շերտերի դրության. վատթարացման պատկերը ճգնաժամի ընթացքում: Մենք ստիպված ենք սահմանափակվելու աշխատավոր մասսաների գրության վատթարացման տնտեսական արժանաբերի նկարագրությամբ, գյուղացիության աղքատության առանձին կոնկրետ որինակներով:

Իրենց սեփական հաշվին տնտեսություն վարող «ինքնուրույն» գյուղացիների ավերման յելակետ հանդիսանում եւ անկասկած զների նսկայական անկումը (թվական տվյալները յերկուրդում):

Դների անկումն առաջ բերեց այն, վոր դրամական ձևով արտահայտվող գյուղացիական պարտույթները—հողային ոենտան (վարձակալությունը), տոկոսներն ու հարկերը—իրենց տեսակարար կուռում բոլիբան բարձրացան.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՅՈՒՂԱՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ¹

ՀԱՐՁԱԽԱՊԱՆ յեկամուտ	ՀԱՐԿԵՐ քերի 0%-ՆԵՐ	ՀԵՊՈԹԵԼԿԱՅԻՆ պարտ գիրի 0%-ՆԵՐ	ԱՀԱՍՏԱՎԱՐ- ՑԻ գումարը
1929 թ. . . .	11 918	777	554
1930 թ. . . .	9 414	738	540
1931 թ. . . .	6 911	620	520
1932 թ. . . .	5 143	—	510
			475

¹ «Ինքը ով Ազրիկելուր» (Գյուղատնտեսության տարեգիրք), 1933թ., էջ 703 (ՀԱՄՆ-ի Գյուղատնտեսության մինիստրության պաշտոնական հրատակություն),

Այս թվերն, ինարկե, խիստ մոտավոր են: Զնայած դրան՝ նըանցից կարելի յե հետևյալը յեզրակացնել:

ա) հարկերը, վորոնք 1929 թվին կազմում եյին համախառն յեկամուտի 6,5 %ը, 1933 թ. բաշձրացան մինչև 9 %ը (ներկայումս ել ավելի բարձր են).

բ) ինքորեկային պարտերի տոկոսների բեռը 1929 թվի 4,7 %ը բարձրացավ մինչև 10 %ը 1932 թվին¹:

գ) տօսատավարձի ծախսերը 1929 թ. 10 %ը ընկան 1932 թվին մինչև 9,2 %ը: Այս նշանակում ե, վոր գյուղացիության վերին խավերին հաջողվել եւ աշխատավարձի ծախսերն ել ավելի իջեցնել քան թե նվազել եւ նըանց համախառն յեկամուտը:

Ինչ վերաբերում եւ հողային ոենտանին, նույն աղբյուրը² հետևյալ թվերն եւ տալիս 1929 թ. համար.

ՄԻ ԱԿՐ ԳՈՐԵՑԻ ԾԱԽՄԵՐԸ ՊՈԼԱՐԱՆԵՐԾՎ

ՀՆԴԱՄԵՆԸ	ԱՐԴ ԹՎՈՒՄ ԱԿՆՏԱՆ	ՏՈՂՄԱՆԵՐԸ
17,87	5,44	30,4

Ակներն ե, վոր ոենտայի ծանրությունը միանգամայն անտանելի դարձավ ցորենի գների հսկայական անկման հետ միասին՝ ճգնաժամի ժամանակի: Ազգարային ճգնաժամը հողի գների անկման, վարձակալության անկման հետևանքով բնականաբար տանում ե դեպի հողային ոենտայի տարերային նվազումը: Բայց մինչ տեղի յե ունենում այս պրոցեսը, միլիոնավար ֆերմերներ վոշնչանում են. այն ֆերմերները, վորոնք չեն կարող մուծել տոկոսները, հարկերն ու վարձավճարը, մասամբ բոլորովին լքում են իրենց ֆերմաներն ու գնում են քաղաքներն իրեն գործազրուրկությունը, կամ թե չե նըանց հողը պարտատերերի (ապահովագրական ընկերություններ, բանկեր, վաշխառուներ) սեփականությունն ե դառնում, իսկ նըանք իրենց նախկին հողը մշակում են իրեն վարձակալները:

¹ Տօկոսների ամբողջ բեռն անտարակույս ել ավելի յե մեծացել վարձի տեսքությունները կրպիսի ժամանակ ել ավելի յեն պարագ վեցըրել մատակարարներից ու վաշխառուներից:

² «Ինքը ով 1931 թ.

Բացառապես վարձակալած հող մօտկող ամերիկյան ֆերմերների թվը 1920 թվի 38,1 %-ից բարձրացավ մինչև 42,4 %-ը՝ 1930 թվին (մարդահամարի տվյալները), իսկ այժմ կազմում է, հավանողեն, մոտ 50 % -ը:

Եթե Հոկտեմբերյան հեղափոխությունը հողը տվել է գյուղացիներին, ապա կազմակերպ ագրարային ճգնաժամի ընթացքում գյուղացիներին արագ տեմպով զբկում է իրենց հողային սեփականությունից: Այս, ինչ վոր ճիշտ է ՀԱՄՆ-ի վերաբերմամբ, ինարկե, վերաբերում և բոլոր կապիտալիստական յերկրներին:

Մկրատը: Գների անկումն ավերում է գյուղացիներին վո՛չ միայն այն պատճառով, վոր տոկոսները, հարկերն ու վարձավը-ճարները չեն հասնում գների անկման հետեւց կամ սաստիկ հետ են մնում նրանից, այլև այն պատճառով, վոր գյուղատընտեսական արդյունքների գները շատ ավելի սաստիկ են ընկել, քան արդյունաբերական ապրանքների գները, վորովհետև մենաշնորհները վերջիններիս համեմատաբար բարձր մակարդակի վրա են պահում:

Մկրատը ՀԱՄՆ-ում (1926 թ. գների ինդեքսը = 100)

1929 թ. 1930 թ. 1931 թ. 1932 թ. 1933 թ.
(սեպտեմբեր)

Դյուզատնեսական ար-					
դյունքները . . .	104,9	88,3	64,8	48,2	57,0
Բոլոր մյուս ապրանքները	91,6	85,2	75,0	70,0	76,1
Մկրատը հոգուտ գյուղա-					
տնտեսության (+) և նրան	+ 12,6 %	—	—	—	-33,5%
ի վեաս (-)					

Մկրատը գերմանիայում (1913 թ. գների ինդեքսը = 100)

1929 թ. 1930 թ. 1931 թ. 1932 թ. 1933 թ.

					(հոկտեմբեր)
Ապրարային արդյունքները	130,2	113,1	103,8	91,3	92,7
Արդյունաբերական ֆաբրի-					
կաները . . .	117,4	50,1	136,2	117,9	113,8

Այս աղյուսակները ցույց են տալիս, թե ինչպես գների մկրատը նպածամի ընթացքում ի վեաս գյուղացիության ե բացվել:

Սակայն պետք է ամենայն հաստատամտությամբ ընդգծել վոր այս պաշտոնական տվյալները սաստիկ նվազեցնում են մըկ, բատի ծայրերի իրական հեռացումը: Ագրարային գների ինդեքսն չիմնված է բարայական կուբումների վրա: Այն գները, վոր ֆերմերը կամ գյուղացին գավառում սատանում է հացի կամ անասունի առևտրականից, վորի (առևտրականի) պարտապանն է հանդիսանում ինքը, ել ավելի զգալիորեն սաստիկ ընկած են, քան բորսայական գները, վորովհետև ագրարային արդյունքների առաջանակած կարգանցում է նրա վերաբերմամբ յեղած պահանջներից ջարկը գերազանցում է նրա վերաբերմամբ յեղած պահանջներից կախված է գնորդից: Գյուղացիների կյուղացին ֆինանսապես կախված է նորդից ապրանքի համար քաղաքային սպառող սերի վճարած գների միջնի յեղած տարբերությունը հսկայական է. այդպիս, որինակ, Ռոչեստերի (ՀԱՄՆ) շրջակայքում գտնվող կաթնաֆերմաները 1 լիտր կաթի համար ստանում են 1 1/2 շենտ: Մանրածախի գինը Ռոչեստեր քաղաքում հավասար է 10 շենտի: Գործադուլ անող ֆերմերները պահանջում են 4 1/2 շենտ¹, ցենտի: Գործադուլ անող ֆերմերները պահանջում են 4 1/2 ցենտ²:

Ինչպես ֆերմերների, այնպես նաև սպառողների շահագործումը խոշոր միջնորդական մոնոպոլիաների կողմից իր կլասիկ արտացոլումն է գտնում ամերիկյան բաժնետիրական ընկերությունների շահույթների վիճակագրության մեջ ճգնաժամի ընթացքում:

Բաժնետիրական ընկերությունների գույք յեկամուրը
1932 թ. (Միլիոն դոլարներով)²

Մնադարդյունաբերությունը	(42 բաժնետիրական ընկերություն)	44,0
Կաթը	(20)	19,8
Հացագործարանները . . .	(25)	27,9
Ծխախոտը	(28)	100,3

Նույն այդ 1932 թվին 51 մետաղագործական ձեռնարկությունները ՀԱՄՆ-ում կրել են 160,9 միլիոն դոլար վնաս, 20 ավտոմոբիլային գործարաններ՝ 40 միլիոն դոլար, 78 մեքենաշնորհ գործարաններ՝ 39 միլիոն դոլար վնաս:

¹ «Եյու-Յորլ Տայմս», 30 հունիսի 1933 թ.:

² «Նեյշնել Սիտի Բանկի»-ի վիճակագրությունը:

Գնումներ կատարող մոնոպլիաները ամսնաանգուսպ յեղանակով շահագործում են գաղութային գյուղացիությանը (վորտեղ վոչ մի քաղաքական մոտիվ չկա գյուղացիներին խնայելու, ինչպես միքանի կապիտալիստական յերկիրներում): Այդպես, յերբ մարդարինի ու ոճառարդյունաբերության յերկու համաշխարհային ֆիրմաները—հոլլանդական «Ունիոն» ու անգլիական «Լեվեբիրոզերս» ձուլվեցին, կոպրայի գինը միքանի շաբաթվա մեջ 25% ով ընկալ:

Այն ամենը, ինչ վոր մենք մինչև այժմ մեջ բերինք, ամենից առաջ վերաբերում ե «ինքնուրույն» մանր ու միջին գյուղացիներին: Գյուղական չքափորության դրությունը, վորը չի կարող առանց տարավայր զբաղմունքների ապրել, հուսահատական ե: Կառուցղական աշխատանքների գրեթե լինակատար կանգառումը, մասսայական գործադրկությունն արդյունաբերության մեջ, գործազուրկ արդյունաբերական բանվորների վերադարձը գյուղ՝ իրենց ազգականների մոտ, գործադուրկների հարկադրական տեղափորութիւն իրեւ «սեաբանվորներ» ունեոր գյուղացիների մոտ (Դերմանիա),—այս բոլորը գյուղական չքափորության համար անշարժի յի դարձնում լրացուցիչ դատում գտնել իրեւ վարձուքանվորները: Նրանց դրությունն հուսահատական ե. սովորական նորյա յերևույթ եւ Ամենից ավելի սոսկալի յի ասիական գյուղացու դրությունը ձապոնիայում, Հնդկաստանում ու Չինաստանում: Մի որինակ նրանց անհամար քանակությունից.

«Սառուղ Զայնա Մորնինգ Պոստ»-ը 1932 թ. նոյեմբերի 22-ին գրում ե Շենսի նահանգում տիրող սովի մասին:

«Սահն-Ֆուլյի արվարձաններում ու Սենյան-Խոյի ափին կենդանի ապրանքի շուկա» յեր սարքված, վորտեղ վաճառվում էին 10 տարեկանից վոչ մեծ աղջիկներ, ամեն մեկը 2—3 դուլարով: 10 տարեկանից վեր աղջիկների գինը հավասար ե 5 դուլարի»:

Ինչ վերաբերում ե յեկըռպական գյուղացիական չքափության դրությանը, ապա դրա ամենապայծառ որինակը կլինի,

Հունգարիայում մի տարի առաջ ուշ աշնանը մի ձի բռնվեց,

վորի վկից մի շորի մեջ քաշ եր արված անցագիրն ու նրա տիրոջ նամակը հետեւյալ բովանդակությամբ.

«Յես ավարտեցի աշնանային աշխատանքները: Յես կեր չունեմ, վոր ամբողջ ձմռանը ձիս պահեմ: Վաճառել այն չեմ կարող. վոչ նրան վորեն գին չի տալիս: Սպանել նրան խղճում եմ: Յես նրան ազատ եմ թողնում: Գուցե կդանվի մեկը, վոր բռնի նրան ու կերակրի»:

Չիու լուսանկարն ու նամակի տեքստը հրապարակվեցին ժողովրդականություն վայելող հունգարական մի ժունալում:

Այն անլուր կուլտուրական կարիքի մասին, վորին ազրարային ճգնաժամը յենթարկել ե գյուղացիությանը, մենք կարդում ենք 1933 թ. նոյեմբերի 19-ի «Պեստեր Լույդում» կուղվիդ կեռպղդի հոդվածը գերմանական մի գյուղի մասին հունգարիայում:

«Ունենալով 2 հազար հոգի բնակչություն՝ այդ գյուղը մտնում ե միմիայն մի լրագիր: Մատիտների սպառումը (հաշվելով նաև դպրոցական յերեխաներին) կազմում ե տարեկան 120 հատ: Թրամական շրջանառություն գրեթե բոլորովին չկա. գյուղացիներն զբաղվում են փոխանակային առևտրով արհեստավորների ու մանր առևտրականների հետ:

Գյուղացիները վոչ մի կոպեկ չունեն,—ասում ե գյուղական վարսավիրը,—և նրանք սափրվում են միմիայն մեծ տոներին: Այստեղ վոչ վոքի մոտ փող չկա: Ամբողջ գյուղում հազիվ թե միքանի պեսնոց (մոտ 30 կոպեկ) ճարպի: Մարդիկ հետզհետե տարսովորում են փողով հաշիվ անելը:

... Այն որվանից, յերբ նույնիսկ գյուղական խանութպանն ել կանխիկ փող չունի... զրամական գների մասին այլևս չեն խոսում»:

Այս որինակը, թերևս, բնորոշ ե Արևելյան Յեղվոպայի յերկիրների համար:

Գյուղացիության դրության վատթարացումը լայն գյուղացիական շարժում առաջ բերեց բոլոր յերկիրներում: Քաղաքական շարժումը բռնել ե գյուղացիուրյանը: Վորովինետե հեղափոխական

բանվորների դեմ, պրոլետարական հեղափոխական շարժման դեմ պայքարը մղելիս՝ բուրժուազիան փնտրում է միջին խավերի ոժանդակությունը, ուստի նա փորձում է ամենատարբեր տեսակի միջոցառություններ ու մանյովքներ, վորպեսզի հանդստացնի գոնե կուլակներին ու միջին դյուզացիության վերին շերտերին¹ (պարաքերի պետական մորատորիում, տոկոսների իջեցում, զանազան ապրանքների համար հաստատուն նվազագույն գների սահմանում և այլն): Բայց գյուղացիներին գրավելու համար կատարված բոլոր փորձերն ու մանյովքները մինչև այժմ, ազգարային ճգնաժամի խորության հետևանքով, անհաջող ելին վերջանում: Գյուղացիության վրդովմունքը ծանր սպառնալիք և հանդիսանում բուրժուազիայի տիրապետության համար:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Թեև լուրջ արգելքներ են կանգնած ճգնաժամից «նորմալ», խողաղ, կապիտալիստական յեղանակով դուրս գալու ճանապարհին, թեև համարյա վստահությամբ կարելի յե ասել, վորարդյունաբերական ցիկլի հետագա ընթացքն ընդհատվելու յե հեղափոխությունների ու պատերազմների նոր շրջանով, բայց հենց նոր մեջ բերված փաստերը ցույց են տալիս, վոր տեղի յե ունենում անցումն դեպի դեպքեսախ կամ այն արգեն տեղի յե ունեցել:

Ամերիկան ժուռնալիստ Դյուրանտին տված ինտերվյույի մեջ ընկեր Սաալինն, ինչպես հայտնի յե, արտահայտվեց հետեւյալ կերպով.

«Ինչ վերաբերում ե տնտեսական ճգնաժամին, ապա այն իսկապես վերջին ճգնաժամը չե ինարկե, ճգնաժամը խախտեց բոլոր գործերը, բայց վերջին ժամանակներս, կարծես, գործերն ուկում են կարգի ընկնել: Կարող ե պատահել վոր տնտեսական անկման ամենացած կետն արդեն անցած ե: Ցես չեմ կարծում, թե կհաջողվի հասնել 1929 թ. վերելքին, բայց անցումը ճգնաժամից դեպի դեպքեսախ ու գործերի վորոշ աշխատացում ամենամուտիկ ապագայում, ինարկե՝ վորոշ ատառնությունով դեպի վերե ու ներքե, վճարություն բացառել չե կարելի, այլ գուցե նույնիսկ համանական ե»:

Հարկավոր ե ամենակտրուկ կերպով նշել հետեւյալ հիմնական մոմենտները.

¹ Մինչդեռ ծաղկման փուլից ճգնաժամին անցնելու միջտ տեղի յե ունենում իրենի ըրնի շրջադարձ և այդ պատճառով ել հեշտությամբ կարող ե ճըշդրություն, մեկ այս մեկ այն կողմը տատանվող պրոցես ե. այդ պատճառով ել այն պատճականորեն հետադարձ հայացք գցելու կարգով:

¹ Հիւլիսյան ռեժիմը 500 հազար սժառանդական տնտեսություններ ստեղծելու մասին հրատարակած իր որենքով (տնտեսություններ, վորոնք բազե, մաթիվ արտոնություններ են վայելու և չեն կարող վաճառվել) ապացուցում պատճառով ել նա գոհում ե չքավոր գյուղացիությանն ազատել ավերումից, այդ պես ավելի հարուստ խավերին:

1. Դեպքեսսիան ամենևին ել պարտադիր կերպով վերելքի չի անցնի, այլ առանձին յերկերներում անհամաշափ ընթացք կունենա և ժամանակ առ ժամանակ կոնյունկտուրայի սուր անկումով կուղեղցվի։ Ամենևին ել անկարելի չե, վոր առանձին յերկերների արդյունաբերական արտադրությունը ժամանակավորապես կարող է 1932 թվին հասած ամենացած կետից ել ցած ընկնել կամ թե վայրուտաների արժենորկումը կարող է գեռ շարունակվել։ Ամենակոպիտ սխալ կլիներ՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ու կայունացման վախճանի հիման վրա առաջացած դեպքեսսիան նույնացնել հնորմալ» դեպքեսսիայի հետ։

2. Ճգնաժամի սուր փուլի հաղթահարումը, անցումը գեպի դեպքեսսիա ամենևին չի նօանակում կապիտալիզմի նոր կայունացում։ Թեև ցիկլային արդյունաբերական ճգնաժամն արագացրեց ու ճանապարհ հարթեց կապիտալիզմի ժամանակավոր կայունացման վախճանի գալստյան համար, այնուամենայնիվ կայունացման վախճանի հիմքերը տրված եյին կապիտալիզմի կայունացման հենց ներքին հակասությունների մեջ, ինչպես այդ մասին արգեն ասում եր ընկ. Ստալինը կուսակցության XV համագումարում։

«Թինանսական ոլիգարխիայի տնտեսական քաղաքականությունը ճգնաժամն հաղթահարելու նպատակով (բանվորների ու դյուզացիների կողոպտումը, կապիտալիստներին ու կարվածաերերին տըր վոր ոժանդակությունները) չի կարող վերականգնել կապիտալիզմի կայունացումը, այլ ընդհակառակը, նպաստում ե կապիտալիստական եկոնոմիկայի մեխանիզմի հետագա քայլքայմանը (զրամական սիստեմի խանգարումը, բյուջեները, պետական սնանկությունները, ագրարային ճգնաժամի հետագա խորացումը), կապիտալիզմի հիմնական հակասությունների կտրուկ սրմանը»¹։

3. Արդյունաբերական ճգնաժամը կապիտալիզմի ընդհանրական նգնաժամի հետագա խորացման հասցեց։ Համաշխարհային տնտեսական կապերի ամենաառժեղ քայլքայում (վալյուտային քառու, միջազգային վարկային սիստեմի քայլքայում, ներքին շուշան կան փոխադարձաբար միմյանցից պատվարելը, մոնոպոլիստական կապիտալիզմի բոլոր հատկությունների նշանակալից ուժեղա-

ցումը ճգնաժամի տարիների ընթացքում, ագրարային ճգնաժամի սրացրած ձևով շարունակվելը), իմպերիալիստական հակառակությունների այն աստիճանի սրում, վոր ուղածդր ըստեյին ամենանշան առիթը կարող է համաշխարհային պատերազմ առաջացնել—ահա միջաղղային արդի գրության բնորոշ մոմենտները։ Անցումը դեպի դեպքեսսիա այս իմաստով վոչ մի եյական բան չի փոխում։


4. Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի այս խորացումը վորշում և նաև հեղափոխական ճգնաժամի հետագա հասունացումը։ Կապիտալիստաների հույսերը՝ նոր ընդհանրական վերելքի վերաբերմամբ՝ հիմքերից զուրկ են նույնիսկ այն դեպքում, յեթե հեղափոխությունների ու պատերազմների նոր շրջանը չխանդարեր ցիկլ «սորմալ» ընթացքը։ Յեթե արդեն ծաղկման նախորդ փուլում յերկիրներ ու արդյունաբերության ճյուղեր կային, վորոնք վերելքի մեջ մասնակցություն չունեյին, ապա այս անգամ նրանց թիվը շատ ավելի մեծ կլինի։ Յեթե 1928—1929 թվին արտադրական կարողության մի զգալի մասը չոգտագործված եր մնում, ապա այս ցիկլում չոգտագործված կմնա նրա ել ավելի մեծ մասը։ Յեթե այն ժամանակ արդեն խրոնիկական ու մասսայական գործադրկություն գոյություն ուներ, ապա հետագա ուցինալացման հետեանքով այն ել ափելի կանի։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը՝ սկսվող նոր ցիկլին ել ավելի սուր գծեր կհաղորդի, քան նախորդին։

Ոյքեկտիվ նախաղյալները բուրժուազիայի տիրապետության տալալման համար՝ առանձին յերկիրներում տարեկ տեմպերով ավելի ու ավելի հասունացում են. չնայած անցմանը դեպի դեպքեսսիան՝ սուրյեկտիվ գործոնը վճռական նշանակություն ե ձեռք բերում։

«Այդ պատճառով ել՝ աջ ոպրտունիստական սխալ կլիներ չտեսնել այժմ հեղափոխական ճգնաժամի արագացրած հասունացման ոլցեկտիվ տենդենցիները կապիտալիստական աշխարհում։ Բայց այդ թե տնտեսական ու թե քաղաքական տենդենցիների առկայությունն ու ներգործությունն ամենեին չի նշանակում, թե հեղափոխական զարգացումն ինքնահոսով կամ անարդել և գեպի վեր-

¹ Կոմինտերնի XIII պլենումի թեղիսները։

բարձրանում, առանց դիմադրության՝ հականերգործող ուժերի կողմէ
մից: Հեղափոխական զարգացումը միաժամանակ և՛ դժվարանում և,
և՛ արագացվում բուրժուազիայի ֆաշիստական մոլեգնության շնորհ
հիմ: Բանվոր դասակարգի մեծամասնության մարտական պատրաստությունից, սոցիալ-դեմոկրատիայի մասսայական աղղեցությունը գործում է կոմկուսակցությունների կատարած հաջող աշխատանքից և կախված, թե վորքան շուտով պրոլետարիատը կտապալի սնանկացած կազմակերպմի տիրապետությունը¹:



ԳԼՈՒԽՆԵՐԻ ՑԱՆԿ

Հեղինակի կողմից	3
Ներածություն	5
Առաջին գլուխություն ճգնաժամի ընդհանուր պատկերը	9
Յերկրորդ գլուխություն Ազգաբային ճգնաժամը	55
Յերրորդ գլուխություն ճգնաժամի դինամիկան	82
Չորրորդ գլուխություն Բանվոր դասակարգի ու գյուղացիության դրությունը	124
Յեղրակացություն	155

¹ Կոմիտենի ԽIII սլենումի թեղիսները:

Տեխ. խմբագիր Ս. Խաչատրյան
Կոնյուն սրբագրիչ Յե. Տ.-Մինասյան
Սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան
Շարելու տրվեց 25 մարտի 1934 թ.
Տպի բույլատրվեց 25 ապրիլի 1934 թ.
Տպի համար՝ Պ-70
Հրամ. № 205, ինդեքս՝ ՀԿ
Գլավլիս № 7840 (թ), Տիրած 6000
Թուրք չափոր թերը (1 սպ. 62x84).
(10 սպ. թերը, 1 սպ. թերութ 34,560 սպ. 60մ)
Կուսական տպարան, Յեղեկան, Ալլավերդյան փ. № 27

Тех. редактор С. Хачатрян
Контрольн. корректура Е. Т.-Минасян
Корректор А. Т.-Мкртчян
Сдано в набор 25 марта 1934 г.
Подписано к печати 25 апреля 1934 г.

Изд. № 205 Индекс Պ-70
ՀԿ

Типография Партиздана ՀԿ ԿՊ(6)Ա
Էրևան, սլ. Ալլավերդյան, 27



NL0936457

1939г.— 384

ԳԻՒԾ 2 Ր. 50 Կ.

ЦЕНА 2 Ր. 50 Կ.

11

27885



Е. ВАРГА
Новые явления в мировом
экономическом кризисе

Партиздат—1934—Эреванъ